


ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

# ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿ

2014 ԹՎԱԿԱՆ N 8-9 (1302-1303) ՀՈՒՆԻՍ



# Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԸ

**Ա. ԱՇՈՏՅԱՆ.** *Խնդրում եմ տարածել, որպեսզի մեր ուսանողներն առավել տեղեկացված լինեն իրենց իրավունքների և նոր հնարավորությունների մասին:*

Սիրելի ուսանողներ, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը ստորագրել է Ազգային ժողովի ընդունած «Կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ու «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքները:

Հիշեցնեմ, որ սա Հայաստանի ողջ պատմության մեջ աննախադեպ օրենսդրական փաթեթ է, որով մեր ուսանողների համար ստեղծվում են կայուն սոցիալական երաշխիքներ և բարձրագույն կրթության առավել ընդգծված մատչելիություն:

Թվարկեմ օրենքների ընդամենը մի քանի դրույթներ՝

ա. Կառավարության կողմից ԲՈՒՀ-երի ուսման վարձերի վերին շեմ կասահմանվի:

բ. Պետական ԲՈՒՀ-երն իրենց հատկացված անվճար տեղերի տաս տոկոսի չափով պարտավոր են տրամադրել անվճար կրթություն՝ պետության համար գերակա համարվող մասնագիտություններով:

գ. ԲՈՒՀ-երի բյուջեների առնվազն յոթ տոկոսը պետք է ուղղվի ուսանողական զեղչերին:

դ. Օրենքով երաշխավորվում են ֆիքսված ուսանողական զեղչեր սոցիալապես խոցելի խմբերի համար:

Այս ամենը կգործի լավ առաջադիմություն ունեցող ուսանողների համար:

Եվս մեկ կարևոր քայլ կատարեցինք, որպեսզի ոչ մի լավ սովորող ուսանող չզրկվի բարձրագույն կրթության հնարավորությունից:


Օրենքի մանրամասներին առաջարկում եմ ծանոթանալ դրա հրապարակումից հետո:



## ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ

Համալսարանի գիտական խորհուրդը, լսելով և քննարկելով ռեկտոր, պրոֆ. Մ. Զ. Նարինյանի՝ «Բժշկական համալսարանի գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման խնդիրներն ու դրանց լուծման ուղիները» թեմայով զեկուցումը, որոշեց՝

- Համալսարանի գիտական գործունեությունը գնահատել բավարար:
- Հանձնարարել գիտության և տեղեկատվական տեխնալոգիաների վարչության պետին և գիտակորդինացիոն խորհրդի փորձագիտական հանձնաժողովների նախագահներին՝ ներկայացնել
  - համալսարանի գերակա գիտական ուղղությունները՝ ներգրավելով «Գիտություն առողջության մասին» ուղղությունը,
  - առաջարկներ՝ միջազգային դրամաշնորհների դիմելիությունը խթանելու ուղղությամբ,
  - գիտական գործունեության արդյունքների գնահատման՝ կրեդիտավորման վերաբերյալ:
- Հանձնարարել բոլոր ուսումնական և գիտական ստորաբաժանումների ղեկավարներին՝ եռամսյա ժամկետում ներկայացնել առաջարկ ուսանողական հետազոտական կրեդիտների վերաբերյալ:
- Ընթացք տալ վիվարիումի ստեղծման աշխատանքներին:
- Որոշման կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր Մ. Զ. Նարինյանին:



### ԱՊՐԱՎ ԲԺԵՇԿ

Գլխավոր խմբագիր  
**ՍԵՂԱ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԹՈՐՈՍՅԱՆ**  
Editor Seda KH. TOROSYAN

Թղթակից  
ԱԻՂԱ ՀԱԿՈՒՅԱՆ

Անգլերեն նյութերի պատասխանատու  
ԱՆԱՅԻՏ ԴԵՄՈՒՐՅԱՆ  
Համակարգչային ձևավորումը  
ԼԻԼԻԹ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

Լրատվական գործունեություն իրականացնող  
Երևանի Մխիթար Հերացու անվան պետական  
բժշկական համալսարան պետական ոչ  
առևտրային կազմակերպություն

Թերթը գրանցված է ՀՀ արդարադատության  
նախարարությունում:

Գրանցման վկայական N 299: Տպագրվում է  
«ԼԵԳԱԼ ՊԼՅՈՒՄ» ՍՊԸ հրատարակչությունում է  
Հեռախոս՝ (060) 62-12-46, 2-46,  
E-mail: apagabzhishk@ysmu.am  
Տպաքանակը՝ 500 օրինակ:  
Անվճար

# ԵՊԲՅ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵՑԻՆ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԿՈՂՄԻՑ

Վերջերս բնական գիտությունների, կիրառական տեխնալոգիաների, մանկավարժության, առողջապահության և այլ ոլորտների առաջատար մի շարք մասնագետներ ՀՀ նախագահի կողմից պարգևատրվեցին պատվավոր կոչումներով և մեդալներով: Երևանի Մ.Հերացու

անվան պետական բժշկական համալսարանի 3 աշխատակիցներ ևս պարգևատրվողների շարքում էին:

ԵՊԲՅ գիտահետազոտական կենտրոնի ղեկավար, «Նոր հայկական բժշկական հանդես» գիտաբժշկական պարբերականի գլխավոր խմբագիր, բժշկական գիտությունների

դոկտոր, պրոֆեսոր Արտո Զիլֆյանին՝ հանրապետության տոնի կապակցությամբ, մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործում ունեցած վաստակի համար շնորհվեց ՀՀ գիտության վաստակավոր գործչի կոչում:

Դեղագիտական ֆակուլտետի քիմիայի ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Լիդա Սահակյանին շնորհվեց ՀՀ վաստակավոր մանկավարժի կոչում:

ԵՊԲՅ տեղագրական անատոմիայի և օպերատիվ վիրաբուժության ամբիոնի դոցենտ, բժշկական գիտությունների դոկտոր Ռզգան Շմոյանը հանրապետության տոնի կապակցությամբ, առողջապահության զարգացման գործում ներդրած ավանդի համար պարգևատրվեց «Մխիթար Հերացի» մեդալով:

Շնորհավորում ենք մեր գործընկերներին ստացած պատվավոր կոչումների և մեդալի կապակցությամբ ու մաղթում նորանոր հաջողություններ:



## YSMU STAFF AWARDED BY THE RA PRESIDENT

Various specialists of natural sciences, applied technologies, pedagogy, healthcare and other fields have recently been awarded with titles and medals by the RA President. Three employees of YSMU were among them awarded:

Arto Zilfyan, MD, the YSMU Scientific-Research Center Head, Chief Editor of “The New Armenian Medical Journal” scientific medical publication, was awarded a title of Honorary Worker of Science of the Republic of Armenia for having a contribution to educating and gearing of the younger generations on the occasion of the Republic Day.

Professor Lida Sahakyan, Ped. D., Chemistry

Department Head of YSMU Pharmacological Faculty, was awarded a title of Honorary Pedagogue of the Republic of Armenia for having a contribution to educating and gearing of the younger generations.

Rzgan Shmoyan, PhD, Associate Professor, Head of YSMU Department of Topographical Anatomy and Operative Surgery, was awarded Mkhitar Heratsi Medal, for having a contribution to healthcare development on the occasion of the Republic Day.

We cordially congratulate our colleagues on awards and titles, and wish them new professional successes.

# ՆՅԱՐԴԱՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԼԽՈՒՂԵՂԻ ԿԱԹՎԱԾԻ ԲՈՒԺՄԱՆ ՄԻԱԿ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԿԵՆՏՐՈՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

**Բ**ժշկական համալսարանի «Յերացի» թիվ 1 համալսարանական հիվանդանոցում ԵՊԲՀ շրջանավարտ, Ատլանտայում հայտնի նյարդավիրաբույժ Արթուր Գրիգորյանի նախաձեռնությամբ բացվեց նյարդավիրաբուժության և գլխուղեղի կաթվածի բուժման մասնագիտացված կենտրոն:

Առաջին հիվանդանոցում այս կենտրոնը գործում էր արդեն չորս տարի, սակայն չունեի ժամանակակից սարքավորումներ և վերապատրաստված մասնագետներ: Հանձնիս մեր շրջանավարտի հայրենասիրական քայլի՝ կենտրոնն այսուհետև բոլորովին ուրիշ հնարավորություններով կներկայանա պացիենտներին, քանզի նյարդավիրաբուժության և գլխուղեղի կաթվածի բուժման մասնագիտացված այս կենտրոնն առաջինն ու միակն է Հայաստանում:

Կենտրոնը բացելու գաղափարը Արթուր Գրիգորյանին տվել է մայրը՝ Ադա Թադևոսյանը. «Մի անգամ շատ լուրջ գրուցեցի նրա հետ: Ասացի, որ ինչքան էլ հաջողակ նյարդավիրաբույժ լինես, դու պարտք ունես. վերադարձրու այն համալսարանիդ, Հայրենիքիդ»:

Հանդես գալով կենտրոնի բացման արարողության ժամանակ տիկ. Թադևոսյանը կենտրոնին փոխանցեց բյուրեղապակյա զանգ, որը նրան տվել էր իր գործընկերներից մեկն ու հորդորել՝ հնչեցնել այդ զանգն այնտեղ, որտեղ մարդիկ օգնության կարիք ունեն: Ջանգն այս տարի կմնա նորաբաց կենտրոնում:



Կենտրոնի բացման արարողությանը մասնակցեցին ՀՀ առողջապահության նախարար Արմեն Մուրադյանը, ԵՊԲՀ ռեկտոր Միքայել Նարինյանը, նյարդավիրաբուժության նահապետ Սուրեն Ջոհրաբյանը, «Հայաստան» համահայկական հիմնադրամի ԱՄՆ մասնաճյուղի գործադիր տնօրեն Խորեն Բանդազյանը, նույն կառույցի տնօրեն Իրինա Լազարյանը, կենտրոնի ղեկավար, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, նյարդավիրաբուժության ամբիոնի վարիչ Ռուբեն Ֆանարջյանը և այլոք:

ԵՊԲՀ ռեկտոր Միքայել Նարինյանը՝ ողջունելով կենտրոնի բացմանը ներկա հյուրերին և գործընկերներին, ներկայացրեց կենտրոնի ստեղծման պատմությունը, վերլուծեց այն խնդիրները, որոնք կլուծվեն կենտրոնի գործունեության մեկնարկով. «Միակ նպատակը, որ ունեցել ենք 4 տարի առաջ կենտրոնը հիմնելու նախաձեռնությունը սկսելուց ի վեր, եղել և մնում է բուժման արդյունավետության բարձրացումը և մահացության ու հաշմանդամության ցուցանիշի նվազեցումը: 4 տարվա

ընթացքում հետվիրահատական մահացության ցուցանիշը 25%-ից նվազել է մինչև 12%: Ճիշտ է՝ առաջնային պայքարը մենք մղում ենք հիվանդի կյանքի համար, բայց չմոռանանք նաև, որ մեր նպատակը կյանքի բարձր որակ ապահովելն է»:

Անդրադառնալով այն հարցին, թե ինչպես էր նախկինում իրականացվում նյարդավիրաբուժական բուժումը՝ ռեկտորը ավելացրեց, որ այսուհետև կկիրառվի ներանոթային մոտեցումը, ինչը շատ ավելի քիչ տրավմատիկ է:

«Իհարկե՝ Հայաստանում կատարվել են նման միջամտություններ, սակայն դրանք իրականացվել են արտասահմանյան մեր գործընկերների կողմից: Գիտակցելով մեր մասնագետի վերապատրաստման անհրաժեշտությունը՝ ձեռնամուխ եղանք այն կազմակերպել ԱՄՆ-ում՝ ի դեմս Ռուբեն Ֆանարջյանի: Այսօր կենտրոնը հագեցած է թե՛ տեխնիկական, թե՛ մասնագիտական ռեսուրսով»:

Հանդիսության ընթացքում ՀՀ առողջապահության նախարար Արմեն Մուրադյանը իր խոսքում նշեց, որ մեր երկրում բարձր են մահացության ցուցանիշերը ոչ ինֆեկցիոն հիվանդություններից, որոնց թվում են սրտանոթային համակարգի հիվանդությունները: Մասնավորապես՝ տարեկան Հայաստանում գլխուղեղի կաթվածի մոտ 5.000 դեպք է գրանցվում, և այդ հիվանդների կեսը կան մահանում է, կան դառնում հաշմանդամ: Առողջապահության նախարարը կարևորեց կենտրոնի բացումը, քանի որ այն հնարավորություն կտանվազեցնել այս ցուցանիշերը, իսկ կենտրոնի գործունեության և զարգացման հեռանկարների մասին ՀՀ

առողջապահության նախարարը ավելացրեց. «Պետք է մտածել գլխուղեղի կաթվածի ոչ միայն վիրաբուժական բուժման, այլև դրա կանխարգելման և վաղ ախտորոշման մասին: Այս առումով պետք է իրագործել ծրագիր, որ պացիենտը հիվանդանոցում հայտնվի այն ժամանակամիջոցում, երբ հնարավոր կլինի կանխարգելել ինսուլտի զարգացումը: Այս խնդրի լուծման համար ծրագրում պետք է ակտիվորեն ներգրավված լինեն նաև առաջնային օղակի բժիշկները: Սա մեծ քայլ է՝ ուղղված հայկական նյարդավիրաբուժության զարգացմանը: Այսպիսի կենտրոնների ստեղծումը նպաստում է նաև կրթական ծրագրերի ստեղծմանն ու դրանց իրագործմանը»:

Նյարդավիրաբուժության և գլխուղեղի կաթվածի բուժման մասնագիտացված նորաբաց կենտրոնի տնօրեն, ԵՊԲՀ նյարդավիրաբուժության ամբիոնի վարիչ Ռուբեն Ֆանարջյանի կարծիքով կենտրոնում կան բոլոր հնարավորությունները՝ նյարդաբանական հիվանդությունների ախտորոշման և բուժման համար: Գլխուղեղի կաթվածի վիրահատությունների համար այլևս արտասահման մեկնելու կարիք չկա: Վերապատրաստված հայ նյարդավիրաբույժները կարող են և՛ հետազոտել, և՛ վիրահատել: «Կենտրոնը բացառիկ է նաև նրանով, որ այստեղ իրականացվելու են ոչ միայն կրթական, այլև բուժական ծրագրեր»:

Այս ոլորտում վիճակագրության



պատկերը ներկայացնելով՝ պրոֆ. Ռ. Ֆանարջյանը նշեց. «Ամեն տարի Հայաստանում ունենում ենք գլխուղեղի կաթվածով ավելի քան հազար հիվանդներ: Այս թվի կեսը կազմում են իշեմիկ ինսուլտները, մյուս կեսը՝ արյունազեղումները: Տարեկան մենք ունենում ենք զարկերակային անևրիզմալների պատռվածքով շուրջ 450 հիվանդ: Ցավալիին այն է, որ դրանցից հիվանդանոցային համալիր հասնում են ընդամենը 100-ը: Պատճառները մի քանիսն են. շատ դեպքերում անհետևողականության պատճառով հիվանդը մահանում է մինչև հիվանդանոցային համալիր հասնելը, որոշ դեպքերում պատճառը տեղեկացվածության պակասն է, իսկ բնակչության մի ստվար մասի համար պատճառ է անվճարունակությունը»:

Գլխուղեղի կաթվածի դեպքում մահացությունը կազմում է 52%, իսկ հետվիրահատական մահացությունները՝ 12%: Այսինքն՝ բուժումը կարող է լինել արդյունավետ: Կենտրոնի բացառիկությունը կայանում է նրանում, որ այժմ կան բոլոր հնարավորությունները՝ ինչպես մասնագիտական, այնպես էլ տեխնալոգիաների և բուժման մեթոդների հարցում: Հիվանդը կարիք չունի իր բուժումը պլանավորել արտասահմանում, քանի որ բոլոր այն հիվանդությունները, որոնք նպաստում են ինսուլտի, կաթվածի առաջացմանը, մեր կենտրոնում ենթակա են բուժման: Այն պետք է վերաբերի ոչ միայն առաջնային օղակի, շտապ օգնության բժիշկներին, նյարդաբաններին, նյարդավիրաբույժներին, այլև՝ մարզային բժիշկներին»:



Նյարդավիրաբուժության նախապետ Սուրեն Ջոհրաբյանը ՀՀ առողջապահության նախարարի հետ

# LAUNCH OF THE VERY FIRST SPECIALIZED CENTER OF NEUROSURGERY AND STROKE TREATMENT IN THE FIRST UNIVERSITY CLINIC

The launch of the specialized Center of Neurosurgery and Stroke Treatment took place in the Heratsi N1 University Clinic.

YSMU Rector Michael Narimanyan welcomed the colleagues and guests present and introduced them the center establishment history. He informed that the initiative belongs to the YSMU graduate, Arthur Grigoryan, a well-known surgeon, who at present lives and works in the USA and who has received an idea of opening a same kind of a center from his mother Aida Tadevosyan.

“With the help of a well-known neurosurgeon the department of neurosurgery of our Clinic has been equipped with cardiovascular and stroke prevention and treatment apparatus”. The Rector mentioned that Arthur Grigoryan periodically transfers practical knowledge to his colleagues and the university students.

Armen Muradyan, the RA Minister of Health, noted that the mortality rate from non-infection diseases is high in the country, among them is cardiovascular diseases. In particular there are around 5000 cases of stroke in



Armenia, and half of patients either die or obtain disabilities. The Health Minister considered the launch of the Center of importance since it will give the opportunity to reduce those rates.

Ruben Fanarjyan, YSMU Neurosurgery Department Head, and the Center Director, mentioned that there are all the opportunities in the newly opened center to diagnose and

treat neurologic diseases. There is already no need to go abroad for stroke treatment surgeries. The Armenian neurologists, who have been trained, can examine and carry out operations. As mentioned by the Professor, the Center is also exclusive with the fact that along with medical treatments there will also be held educational activities.

Mother of Arthur Grigoryan also made a speech who passed a glass bell which has a years' history: Mrs. Tadevosyan was given that bell by one of her colleagues who had told her to ring it where people are in need of help. This year the bell was decided to be left in the newly opened center.

Worth noting that the specialized Center is the first and the only one in Armenia.



# ՄԱՆԿԱԲԱՐՁ-ԳԻՆԵԿՈԼՈԳՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ ԵՊԲՅ-ՈՒՄ

Օրերս Երևանի Մ.Յերացու անվան պետական բժշկական համալսարանում կայացավ «Բուժական արդիական մեթոդների կիրառումը մանկաբարձությունում և գինեկոլոգիայում» երկրորդ միջազգային գիտագործնական կոնֆերանսը:

Ողջույնի խոսքով հանդես եկավ ԵՊԲՅ ռեկտոր Սիբայել Նարիմանյանը. «Մենք շատ ենք կարևորում գիտագործնական նման կոնֆերանսների անցկացումը, քանի որ դրանցից ունենք մեծ սպասելիքներ մեր գործունեության 3 կարևոր բաղադրիչների առումով՝ մասնագիտական ծրագրեր նախադիպլոմային, հետդիպլոմային և շարունակական կրթության շրջանում և ԲՈՒՅ-ի գործունեության միջազգայնացում, ինչը հենվում է ընդհանուր հետազոտական ծրագրերի վրա: Համոզված են, որ այս գիտագործնական կոնֆերանսը հնարավորություն կտա հարստացնելու մեր ուսումնական ծրագրերը գինեկոլոգիայի և մանկաբարձության ոլորտի նորամուծություններով: Այսպիսով՝ հնարավոր կլինի իրականացնել մեր այն բանաձևը, որ կրթությունը և հետազոտական աշխատանքը պետք է լինեն անբաժան: Բոլորին մաղթում են արդյունավետ և փոխշահավետ աշխատանք, գիտական հետաքրքիր մտքերի փոխանակում և հույս ունեն, որ մեր համագործակցությունը կլինի շարունակական»:

Գիտաժողովի մասնակիցներին իր և ՀՀ առողջապահության նախարար

Արմեն Մուրադյանի անունից ողջունեց նաև առողջապահության փոխնախարար Վահան Պողոսյանը. «Ողջունում են գիտաժողովի բոլոր մասնակիցներին և հյուրերին ու ցանկանում են ընդգծել դրա կարևորությունը, քանի որ մայրական և մանկական առողջությունը ՀՀ կառավարության գերակա ուղղություններից է և միտված է մայրական և մանկական առողջության բարելավմանը, կականց և երեխաների բարեկեցությանը և կյանքի որակի բարձրացմանը: Ուրախ են, որ այս գիտաժողովին իրենց մասնակցությունն են բերել մանկաբարձ-գինեկոլոգների համաշխարհային ասոցիացիայի անդամները, ովքեր մեր մասնագետներին կներկայացնեն մանկաբարձագինեկոլոգիական արդիականացման խն-

դիրներն ու դրանց բուժման ժամանակակից մոտեցումները: Ողջունելի է, որ գիտաժողովի շրջանակներում նրանք նաև վարպետության դասեր կտան: Կցանկանայի նշել, որ բուժաշխատողների շարունակական մասնագիտական զարգացման առումով այս խիստ ներկայացուցչական գիտաժողովը կարևոր է և արդյունավետ կլինի»:

Այնուհետև գիտաժողովի մասնակիցներին ողջունեց նաև ԵՊԲՅ մանկաբարձության և գինեկոլոգիայի թիվ 2 ամբիոնի վարիչ, ՀՀ ԱՆ գլխավոր մանկաբարձ-գինեկոլոգ Ռազմիկ Աբրահամյանը, ով շնորհակալություն հայտնեց ԵՊԲՅ ղեկավարությանը և ՀՀ առողջապահության նախարարությանը՝ կոնֆերանսի անցկացմանն աջակցելու համար, իսկ



մասնակիցներին մաղթեց արդյունավետ աշխատանք և շահավետ ու երկարատև համագործակցություն:

Նշենք, որ գիտագործնական կոնֆերանսին մասնակցում էին գինեկոլոգիայի և մանկաբարձության ոլորտի առաջատար մասնագետներ ոչ միայն Հայաստանից, այլև Գերմանիայից, Իտալիայից և Անգլիայից, ովքեր թեմատիկ դասախոսություններ կարդալուց բացի՝ 2 օր շարունակ վարպետության դասեր կտան երիտասարդ մասնագետներին:

# ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ «ՄԻՒԹԱՐ ՀԵՐԱՑԻ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՎԵՐԸ

«Մուրացան» հիվանդանոցային համալիրում իրականացվեց բարեգործական միջոցառում՝ նվիրված երեխաների պաշտպանության միջազգային օրվան:

Միջոցառման ընթացքում Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի բժշկագիտության զարգացման «Մխիթար Հերացի» հիմնադրամի կողմից, որի գործադիր տնօրենը ԵՊԲՀ աշխատակազմի ղեկավար Գագիկ Միրիջանյանն է, «Մուրացան» հիվանդանոցային համալիրի մանկական և նորածնային վերակենդանացման բաժանմունքին նվիրաբերվեց շտապ օգնության հատուկ մեքենա:

Նվիրատվության արարողությունից հետո Տեր Շնավոն սրբազանն օրհնեց ներկաներին և ուժ, կարողություն ու հաջողություն մաղթեց բոլորին՝ բժշկի դժվարին առաքելությունն իրականացնելու գործում:

Ինչպես նշեց մանկական և նորածնային վերակենդանացման կլինիկայի ղեկավար, ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր նեոնաթոլոգ Հրանտ Կալենտերյանը՝ իրենց բաժանմունքում տարեկան բուժվում է շուրջ 600 երեխա, սակայն մինչ այժմ չեն ունեցել նորածինների տեղափոխման մեքենա: Նրանց տեղափոխում էին մեծահասակների համար նախատեսված մեքենաներով, ինչը լրացուցիչ բարդություններ և անհարմարություն էր ստեղծում: Նրա խոսքերով՝ հիմնադրամի կողմից բաժանմունքին նվիրաբերված մեքենան նախատեսված է նորածինների տեղափոխության համար և հագեցած է վերակենդանացման համար անհրաժեշտ բժշկական բոլոր սարքավորումներով:

Ըստ հիմնադրամի գործադիր տնօրենի տեղեկացման՝ նվիրատվության նախաձեռնությունը պատկանում է ԵՊԲՀ կլինիկական աշխատանքների գծով պրոռեկտոր Արմեն Մինասյանին, և ԵՊԲՀ ռեկտորի համաձայնությունն ու հանձնարարականը ստանալուց հետո իրենք համատեղ ուժերով կարողա-



ցան իրականացնել այն: Գագիկ Միրիջանյանը վստահություն հայտնեց, որ նմանատիպ մեքենայի առկայությունը նորածինների տեղափոխման և բուժման գործընթացում ոչ միայն հնարավորություն կտա փրկել բազմաթիվ նորածինների կյանքեր, այլև կլինի բժշկագիտության զարգացմանն ուղղված արդյունավետ քայլ:

ԵՊԲՀ կլինիկական աշխատանքների գծով պրոռեկտոր Արմեն Մինասյանի զնահատմամբ «Մուրացան» հիվանդանոցային համալիրը համարվում է մանկական և նորածնային վերակենդանացման հանրապետական կենտրոն, ուստի

հանրապետության բոլոր մարզերից այստեղ են տեղափոխվում խնդիրներ ունեցող նորածինները: Այդ առումով նվիրաբերված մեքենան ավելի արդյունավետ կդարձնի նորածինների տեղափոխումը և բուժումը, քանի որ զինված է բժշկական տեխնիկայի վերջին խոսքին համապատասխան:

Նշենք, որ «Մուրացան» հիվանդանոցային համալիրին նվիրաբերված մեքենան առաջինն ու միակն է ոչ միայն Հայաստանում, այլև ողջ տարածաշրջանում:

# “MKHITAR HERATSI” MEDICAL SCIENCE DEVELOPMENT FUND DONATES AMBULANCE CAR FOR NEONATAL REHABILITATION

A philanthropic event was organized in YSMU Mouratsan Hospital Complex dedicated to the International Day for Protection of Children.

During the event a special ambulance car was donated to the Mouratsan Hospital Complex by Mkhitar Heratsi Medical Science Development Fund the Executive

Director of which is Gagik Mirijanyan.

After the donation, Priest Ter Shmavon blessed the people present wishing them strength and success during the implementation of doctor's difficult mission.

As was mentioned by Hrant Kalenteryan, Head of Pediatrics and Neonatal Rehabilitation Clinic, Chief

Neonatologist of RA Ministry of Health, around 600 children are cured in the department, however so far they did not have a special car for newborns.

Those have been transferred with cars foreseen for adults, which created additional difficulties. According to him the donated car is comfortable which is very important for transferring newborns, and it is also equipped with all necessary facilities.

YSMU Head of Staff, Executive Director of the Mkhitar Heratsi Medical Science Development Fund Gagik Mirijanyan informed that the donation initiative belongs to Armen Minasyan, the YSMU Vice Rector for Clinical Affairs, and after receiving the YSMU Rector's approval they were able to realize it jointly. Gagik Mirijanyan said that the existence of such a car will not only give the opportunity to save lives of many newborns, but it will also be an efficient step forward aimed at medical science development.

YSMU Vice Rector for Clinical Affairs Armen Minasyan mentioned that the Mouratsan Hospital Complex is considered a republican center of pediatrics and neonatal rehabilitation, meaning that from all regions (marzes) of the Republic the newborns with problems are transferred to the Center, and the donated car will make the transfer more efficient, since it is equipped with recent trends of medical facilities.

Worth mentioning that the car donated to Mouratsan Hospital Complex is the only one not only in Armenia but in the whole region.



# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒՄ ԵՆ ՀԱՅ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐՅՈՒՆԱԲԱՆՆԵՐԸ

Երևանի Մ.Յերազու անվան պետական բժշկական համալսարանում բացված Ամերիկայի կլինիկական ուռուցքաբանության միության (ASCO) ու արյունաբանության և ուռուցքաբանության հայկական ասոցիացիայի առաջին համատեղ գիտաժողովը նվիրված էր բժշկության մեջ կրծքագեղձի, ստամոքսաղիքային տրակտի քաղցկեղի, լեյկեմիայի բուժման նորագույն մեթոդների ներդրմանը:

Բացման խոսքում ԵՊԲՀ ռեկտոր Սիբայել Նարինյանը նշեց. «Ուռուցքաբանությունը բժշկության կարևորագույն ուղղություններից է, և այդ առումով ցանկանում են ընդգծել այս գիտաժողովի անցկացման կարևորությունը, քանի որ մեզ համար կարևոր է փորձի փոխանակումը. ոչ միայն մեր հյուրերից ընդունել խորհուրդներ, լսել նոր մեթոդների մասին, այլև ցույց տալ, թե որտե՞ղ ենք հասել մենք այս բնագավառում և ի՞նչ ձեռքբերումներ ունենք: Ուռուցքաբանության մեջ հատկապես կարևորում են հիվանդության վաղ ախտորոշումը, ինչը նպաստում է բուժման առավել արդյունավետ ընթացքին: Հուսով են՝ այս միջոցառումը կլինի արդյունավետ և կդառնա շարունակական համագործակցության գրավական»:

ՀՀ առողջապահության նախարարի և իր անունից ողջունելով գիտաժողովի մասնակիցներին՝ ՀՀ առողջապահության փոխնախարար Սերգեյ Խաչատրյանը նշեց. «Անչափ կարևորում ենք նման միջոցառումների անցկացումը, քանի որ այն անմիջականորեն կապված է ծանրագույն հիվանդության բուժման հետ, և հանդիսանում են, որ այս գիտաժողովի ընթացքում քննարկվող հարցերը և փորձի փոխանակումը կլինեն արդյունավետ՝ Հայաստանում հիվանդների մահացության թվով երրորդ տեղում գտնվող այս հիվանդության քաղցկեղի բուժման գործում»:

Ողջունելի խոսքով հանդես եկավ նաև ԵՊԲՀ «Մուրացան» հիվանդանոցային համալիրի քիմիաթերապիայի կլինիկայի ղեկավար Սամվել Դանիելյանը. «Ուրախ են ողջունելու գիտաժողովի մասնակիցներին և



ցանկանում են փաստել, որ ինտեգրացիան միակ ճանապարհն է գրագետ կիրառական բժշկություն ապահովելու համար, ինչի նպատակով էլ կազմակերպվել է այս միջոցառումը: Այն, ի դեպ, առաջինն է տարածաշրջանում և, հուսով են՝ կկրի շարունակական բնույթ»:

Գիտաժողովի մասնակիցներին և արտասահմանից ժամանած հյուրերին ողջունեց նաև ուռուցքաբանության ազգային կենտրոնի տնօրեն, ԵՊԲՀ հետդիպլոմային կրթության ֆակուլտետի ուռուցքաբանության ամբիոնի վարիչ Հայրապետ Գալստյանը. «Շնորհավորում են գիտաժողովի բացման առիթով և ողջունում մասնատիպ միջոցառումների անցկացումը, քանի որ դրանք ուղղված են կարևորագույն խնդրի լուծմանը՝

չարորակ ուռուցքներ ունեցող հիվանդների բուժմանը և կյանքի որակի բարելավմանը»:

Այնուհետև ուռուցքաբանության ազգային կենտրոնի տնօրենը հակիրճ տվյալներ ներկայացրեց հանրապետությունում ուռուցքներով հիվանդների առկայության և նրանց բուժման վերաբերյալ:

Ողջունելի ելույթներից հետո ԱՄՆ-ից, Հնդկաստանից, Լեհաստանից, Լիբանանից, Ռուսաստանի Դաշնությունից և Վրաստանից ժամանած հայտնի ուռուցքաբանները, ռադիոլոգները, վիրաբույժները և պալիատիվ բժշկության մասնագետները ներկայացրին իրենց գեկուցումները կրծքագեղձի, ստամոքսաղիքային տրակտի քաղցկեղի, լեյկեմիայի բուժման թեմաներով:





# FIRST JOINT CONFERENCE OF AMERICAN UNION OF CLINICAL ONCOLOGY (ASCO) AND ARMENIAN ASSOCIATION OF HEMATOLOGY AND ONCOLOGY ORGANIZED IN YSMU

The first joint conference of the American Union of Clinical Oncology (ASCO) and the Armenian Association of Hematology and Oncology was opened in the Yerevan State Medical University after M. Heratsi, which was dedicated to the application of newest methods of treatment of breast cancer, cancer of the gastrointestinal tract and leukemia.

In his welcome speech the YSMU Rector Michael Narimanyan mentioned: "Oncology is one of the important directions in the medicine, and in this regard I would like to highlight the importance of this conference since sharing experience is important to us, not only for seeking advise from our guests, getting to know about new methods, but also showing where we have reached in this field and what achievement we have. In the field of oncology I consider the early diagnosis of great importance which supports the maximum effective process of treatment. During the Conference this issue will also be tackled. I hope this event will be effective and will be a base for continuing cooperation".

On behalf of the RA Minister of Health, Sergey Khachatryan, the Deputy Minister of Health, welcomed the Conference participants and said: "We consider the organization of such events of utmost importance since it is directly connected with treatment of the toughest disease, and I am sure that the issues discussed during this Conference and the sharing of experience will be effective for the treatment of cancer which lies in the

third place of mortality".

Samvel Danielyan, the Head of the Chemotherapy Clinic of the YSMU Muratsan Hospital Clinic, welcomed the participants: "I am happy to welcome the Conference participants, and would like to note that integration is the only way of ensuring applied medicine with the aim of which this event has been organized. It is by the way the first in the region and I hope it will carry a sustainable character".

Hairapet Galstyan, the YSMU Oncology Department Head, the Director of the National Center of Oncology, welcomed the Conference participants and guests: "I extend my congratulations on the launch of the Conference and wel-

come such events since those are directed to the solution of a very important issue, which is the improvement of life quality and treatment of patients with malignant tumors". Later the Director of the National Oncology Center briefly introduced some details regarding the presence of patients with tumors and the relevant treatment.

After welcoming speech well known specialists of tumor, radiologists, surgeons and specialists of palliative medicine from the USA, India, Poland, Lebanon, Russian Federation and Georgia, presented their reports on treatment of cancer of breast, gastrointestinal tract and leucemia.



# ՄԵՐ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ ՀՀ ԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԱՏՈՄԱՏՈԼՈԳ ԼԱԶԱՐ ԵՍԱՅԱՆԻ ՀԵՏ



**- Վերջերս Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանում կայացավ «Ստոմատոլոգիայի և դիմածնոտային վիրաբուժության արդի հիմնախնդիրները» խորագրով ստոմատոլոգների 4-րդ միջազգային վեհաժողովը: Ինչի՞ն էր նվիրված այն:**

- Նվիրված էր «Ստոմատոլոգիական կրթություն և գիտություն» ասոցիացիայի 5-ամյա հորեյվանին: Այն ստեղծվել է դեռևս 2009-ին: Վերջինիս նպատակը կայանում է նրանում, որ բոլոր մասնագիտական գիտական թեզերը, որոնք պետք է պաշտպանվեն բժշկական համալսարանում, անպայման անցնեն այս ասոցիացիայով և ստանան համապատասխան եզրակացություն: Արդյունքում ստացվեց այնպես, որ այդ բոլոր աշխատանքները ներկայումս քննարկվում են, տրվում է ճիշտ ուղղություն, և մենք ստանում ենք բավականին մեծ արդյունքներ գիտական աշխատանքների շրջանակում: Հետագայում այս ասոցիացիայի վարչության անդամները դարձան մասնակիցները տարբեր մասնագիտական օրենքների մշակման ոլորտում, այդ թվում առողջապահության ոլորտում ստեղծվող հանձնաժողովների: Ասոցիացիայի վարչության անդամները միշտ օգնել են, որպեսզի նախարարության հրամանների, որոշումների շրջանակներում լինի աջակցություն: Բացի դրանից՝ «Ստոմատոլոգիական կրթություն և գիտություն» ասոցիացիան պարբերաբար կազմակերպում է ուսումնական, կր-

թական միջոցառումներ՝ հրավիրելով դասախոսներ արտասահմանյան երկրներից՝ նպաստելով մասնագետների ինքնագարգացման և ինքնակրթման գործընթացին: Առաջին վեհաժողովը նվիրված էր ասոցիացիայի մեկ ամյակին, երկրորդը տեղի ունեցավ 2012-ին՝ նվիրված ստոմատոլոգիական ֆակուլտետի ստեղծման 50-ամյակին, 2013-ին կազմակերպվեց հայկրացական միջոցառումների շարքը, որը կոչվեց «Բինացիոնալ վեհաժողով»՝ հայ-վրացական առաջին վեհաժողով և երրորդ միջազգային կոնգրես, այս տարի արդեն տեղի ունեցավ չորրորդ միջազգային կոնգրեսը, որի ժամանակ մենք էլ ավելի մեծ առաջընթաց ունեցանք՝ պայմանավորված նրանով, որ այս անգամ մասնակցում էին այնպիսի երկրներ և այնպիսի մասնագետներ, որ երբևէ Հայաստանում չէին եղել:

**- Ո՞վքեր էին վեհաժողովին հրավիրված հյուրերը և ո՞ր երկրներից էին եկել:**

- Վեհաժողովին ներկա էին դասախոսներ ԱՄՆ-ից, Ռուսաստանից, Ուկրաինայից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Լիբանանից, Վրաստանից, Ճապոնիայից, Իսրայելից, ովքեր զեկուցումներ և դասախոսություններ կարդացին և «Ձեռքի հմտության» եռօրյա դասեր տվեցին երիտասարդ մասնագետներին: Գիտական զեկուցումներով հանդես եկան նաև ԵՊԲՀ կլինիկական օրդինատորները

և մագիստրոսները: Ունեինք նաև մասնակցություն ոչ միայն դասախոսությունների ձևով, այլ կոնգրեսին ուղղակի մասնակցելու համար եկել էին պատվիրակություններ մոտ 12 երկրներից: Ամենամեծ պատվիրակությունները եկել էին Վրաստանից և Ռուսաստանից: Այս տարի, ինչպես միշտ, ունեցանք մասնագիտական ցուցահանդես, բացառություն կազմեց այն, որ 4-5 երկրների ֆիրմաների ներկայացուցիչները, չունենալով այստեղ որևէ գործընկեր, հայտ ներկայացրին մասնակցելու և ցուցադրելու իրենց արտադրանքը: Սա Հայաստանի մասշտաբով առաջին անգամ էր տեղի ունենում: Բացի տեղական ֆիրմաներից՝ իրենց արտադրանքը ներկայացրին գերմանական «Օլիդենտ», լեհական «Վերդենտ», ամերիկյան «Սեյլեր», ճապոնական «Նիսսին», ինչպես նաև Շվեյցարիայի և Արաբական Էմիրությունների մի շարք ընկերություններ:

**- Ի՞նչ պարբերականությամբ են գումարվում կոնգրեսները:**

- Վեհաժողովները մենք անցկացնում ենք 2 տարին մեկ անգամ, բացառություն էր միայն այն, որ անցյալ տարի մենք անցկացրինք հայ-վրացական կոնգրեսը՝ 2 օր Երևանում, 2 օր՝ Թբիլիսիում: Այն բավականին հաջողված միջոցառում էր, որի նախաձեռնությունը, բնականաբար, մեր ասոցիացիայինն էր:

**- Որքան գիտեմ՝ հյուրերի համար կազմակերպվել էին միջոցառումներ: Կխոսե՞ք մի փոքր այդ մասին:**

- Մայիսի 21-ին ամբողջ պատվիրակությանը ուղեկցեցինք Ծիծեռնակաբերդի հուշահամալիր: Այնտեղ մեր հյուրերը ծանոթացան Հայոց եղեռնի պատմությանը, ծաղիկներ դրեցին և գլուխ խոնարհեցին մեր անմեղ զոհերի հիշատակի հուշահամալիրի առջև: Այնուհետև մենք նրանց տարանք Սևան, և ճանապարհին էքսկուրսավարը նրանց ներկայացնում էր Հայաստանի պատմությունը ռուսերեն և անգլերեն լեզուներով: Սևանում նրանք ծանոթացան մեր ճեմարանի, եկեղեցու պատմությանը: Ճեմարանում լսեցին հոգևոր երաժշտություն, որը նրանց հիացրեց: Մենք այնտեղ հրավիրել էինք նաև օպերայի մեր լավագույն երգիչ-

ներին, ուլքեր նույնպես երգեցին: Այցելեցինք նաև Նուռնուսի խաչքարերի մոտ, նրանց պատմեցինք մեր խաչքարերի մասին: Հյուրերը ցնցված էին՝ տեսնելով ճարտարապետական նման կոթողներ Հայաստանում: Նրանցից շատերն առաջին անգամ էին լսում «խաչքար» բառը և չգիտեին, թե դա ի՞նչ է նշանակում: Նրանք իմացան, որ մեր խաչքարերը մատնահետքերի նման երբևիցե չեն կրկնվում և ունեն իրենց յուրօրինակ կառուցվածքն ու տեսքը: Հյուրերին նվիրեցինք մեր վարպետների ձեռքով փայտից փորագրած խաչքարեր: Այնուհետև գնացինք Հաղարծին, Դիլիջան, որտեղ նույնպես նրանց նվիրեցինք Իջևանի արտադրության հայկական գինիներ: Այս ամենը նրանց համար մեծ անակնկալ էր: Այդ օրերի ընթացքում նրանք եղան Գառնիում, Գեղարդում, Էջմիածնում, Մատենադարանում: Այն ամենը, ինչ հնարավոր էր կազմակերպել հայի կերպարը պատկերացնելու գործում՝ արվեց մեր հյուրերի համար:

**- Ո՞րն էր այս ամենի նպատակը:**

- Կազմակերպված միջոցառումներն ուղղված էին նրան, որ նրանք կարողանան ճանաչել հայ ազգին, ծանոթանան մեր մշակույթին և պատմությանը: Այս միջոցառումների նպատակը ոչ թե զարմացնելն էր, այլ ծանոթացնելը, տեղեկացնելը:

Ամերիկայից եկած մեր հյուրերից մեկը նույնիսկ չէր լսել Հայաստան անունը, մյուսը տեղյակ չէր, որ քրիստոնեությունը առաջինը մենք ենք ընդունել, չգիտեին, որ առաջին քրիստոնեական եկեղեցին գտնվում է Հայաստանում: Շատ բաների մասին նրանք տեղեկացված չէին: Ես անչափ ուրախ եմ, որ նրանք իմացան այդ ամենի մասին և կարող են իրենց հետ տանել այդ ամբողջ տեղեկատվությունը: Նրանք, իհարկե, այդ ամենի մասին կպատմեն իրենց շրջապատում, և ես հուսով եմ, որ յուրաքանչյուր անգամ մեզ կայցելեն մեր պատմությանը քաջատեղյակ մարդիկ: Ցանկանում եմ ավելացնել նաև, որ այս միջոցառումների հիմքում կանգնած էր բժշկական համալսարանի ղեկավարությունը, նրանք մեզ աջակցեցին բոլոր հարցերում, որպեսզի ամեն ինչ լինի բարձր մակարդակով: Ես խորին շնորհակալություն եմ հայտնում համալսարանի ղեկավար Ս. Նարիմանյանին, մեր մյուս գործընկերներին՝ մեծ աջակ-

ցության համար:

Ավելացնեմ նաև, որ մեր ասոցիացիան ուսանողների համար ապահովել էր կոնֆերանսին մասնակցելու ազատ մուտք: Նաև «Վարպետաց դասեր» անցնելու համար սահմանվել էին շատ ցածր գներ՝ ընդհուպ մինչև ազատ մուտք՝ կախված նրանից, թե տվյալ ուսանողի համար ի՞նչ ծախս էր նախատեսված այդ դասընթացների ժամանակ: Մեր հիմնական նպատակն էր մեր երիտասարդ, ապագա կադրերին հնարավորություն տալ մասնակցել նման միջոցառումների և ստանալ մաքսիմալ տեղեկատվություն ստոմատոլոգիայի այսօրվա վիճակի մասին:

Մեր ազգաբնակչության առողջությունն ու առողջապահական խնդիրները մեզ՝ պատասխանատուներիս, պարտավորեցնում են առավել բարձր մակարդակի հասցնել դրանց

լուծումները՝ օգտվելով աշխարհում հայտնի նորոշյա նվաճումներից, այս ասպարեզում կիրառվող բարձրագույն տեխնալոգիաներից և սարքավորումներից, մեթոդներից ու նոտեցումներից: Մենք պատրաստական ենք միմյանց փոխանցելու մեր փորձը, մասնագիտական հմտությունները, նորարարական ձեռքբերումները: Հուսով եմ, որ մեր համագործակցությունը կլինի շարունակական, կտա իր պտուղները և կընդգրկի առավել լայն շրջանակներ:

**- Շնորհակալություն հետաքրքիր հարցազրույցի համար: Ցանկանում եմ ձեզ առավել մեծ հաջողություններ ձեր բնագավառում:**

**Հարցազրույցը՝  
ԱԻՂԱ ՀԱԿՈՒՅԱՆԻ**



# THE FOURTH CONFERENCE OF DENTISTS HELD IN YSMU

On May 22-24 the 4th international conference on “Current Issues of Dentistry and Maxillofacial Surgery” took place in Yerevan State Medical University which was dedicated to the 5th anniversary of “Dentistry Education and Science Association”.

YSMU Rector Michael Narimanyan welcomed the participants and guests and wished them efficient work with the hope that such kind of cooperation will be sustainable and mutually beneficial.

The Conference participants and guests were also welcomed by the YSMU Stomatology Faculty Dean, Chief Stomatologist of the RA Ministry of Health Lazar Yesayan. “The health and healthcare issues of our nation obligate us to have the problem solution to higher level using the well known achievements of the world, the highest technologies and equipment applied, as well as the methods and approaches. We are ready to share our experience, professional skills, and innovative achievements. I hope that our cooperation will be sustainable and fruitful and will broaden the framework”.

Lead experts from the US, Russia, Ukraine, France, Germany, Lebanon, Georgia, Japan, Israel were participating in the Congress who had prepared reports, lectures and gave three-day professional skills lessons to young specialists. YSMU clinical residents and master’s students also made reports on scientific topics.

It’s worth to mention that during the exhibition organized in the framework of the Conference, the German “Olident”, Polish “Verdent”, American “Sailer”, Japanese “Nissin” companies, as well as several companies from Switzerland and UAE, besides the local ones, introduced their products for the first time in Armenia.



# ԵՊԲՅ-Ն՝ VERITAS ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ

## ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ՝ ԶԱԼՑԲՈՒՐԳՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐՈՎ

Վստրիայի Գրաց քաղաքում 2014-ի մայիսի 5-7-ն ընկած ժամանակահատվածում տեղի ունեցավ ԵՄ Տեմպուս Ժրագրի շրջանակներում իրականացվող VERITAS (զալցբուրգյան սկզբունքների հիման վրա կրթական երրորդ մակարդակի կառուցվածքային զարգացում) ծրագրի անդամ մասնակիցների՝ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների և կրթական համակարգի այլ կազմակերպությունների հավաքը՝ համաշխարհային համալսարանական ծառայության ավստրիական կազմակերպության աջակցությամբ, որի ընթացքում կազմակերպվեցին սեմինարներ և քննարկումներ՝ զալցբուրգյան սկզբունքներով:

Հանդիպումները նաև ՀՀ ԲՈՒՀ-երի միջև փորձի փոխանակման հարթակ հանդիսացան՝ նպատակ հետապնդելով Հայաստանում հաստատել երրորդ մակարդակի կրթության՝ ասպիրանտուրայի ընդհանուր մոտեցումներ:

Այն նաև աջակցություն ցուցաբերեց կրթական կառույցներին՝ ընդունելու և կիրառելու եվրոպական բարձ-

րագույն կրթական տարածքի նախաձեռնություններին համահունչ նոր ստանդարտներ:

Հանդիպումների մի մասն անցկացվեց Գրացի համալսարանում, որն իր օգտակար ներդրումն ունեցավ հետազոտական՝ հատկապես ասպիրանտուրայի կրթության մասին սեփական փորձի փոխանակմամբ:

Հանդիպման ավարտին ծրագրի ղեկավար, ԵՊԲՅ անբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր Մ. Բալասանյանը ներկայացրեց ծրագրի հետագա քայլերը:

Հիշեցնենք, որ Տեմպուսի VERITAS ծրագրի մեկնարկային հանդիպումը տեղի ունեցավ 2014-ի հունվարի 13-14-ը՝ Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանում, որը հանդիսանում է VERITAS ծրագրի համակարգողը: Ծրագրի նպատակն է բարելավել դոկտորական կրթությունը Հայաստանի բարձրագույն կրթական համակարգում եվրոպական որակավորումների շրջանակի և զալցբուրգյան սկզբունքների հետ համապատասխանեցմամբ:

## TRAINING COURSE ON SALZBURG PRINCIPLES

The meeting of Tempus VERITAS (Structural Development of the Third Cycle Based on Salzburg Principles) project representatives was held in Graz, Austria. The members of the Project include higher education institutions and other institutions from educational system of the Republic of Armenia. The meeting was held with the support of the WUS Austria non-governmental organization. In the meantime training course on Salzburg Principles was organized for the participants. The meeting was also a platform for RA higher education institutions with the aim to establish common approaches for third cycle education in the Republic of Armenia.

The training course also gave the opportunity for educational institutions to accept and implement new standards in line with European Higher Education Area initiatives.

Part of the meetings was held in the Graz University which had its useful

input especially with sharing its experience about PhD education, mainly the postgraduate education.

At the end of the meeting Professor M. Balasanyan, MD, DSc, Head of the YSMU Pharmacology Department, Coordinator of the Project, introduced the participants the next steps.

Worth mentioning that the Tempus VERITAS Project launch was held on 13-14 January 2014 in Yerevan State

Medical University after M. Heratsi which is the Project Coordinator. The aim of the Project is to improve the postgraduate educational system in the Republic of Armenia harmonizing it with the European quality network and Salzburg Principles.




# ՄԵՐ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐՆ ԱԹԵՆՔՈՒՄ

Աթենքում կայացած եվրոպական սրտաբանական ասոցիացիայի (ԵՍԱ) «Սրտային անբավարությունը 2014» ամենամյա կոնգրեսին մասնակցում էին ավելի քան 70 երկրներից 4.000 մասնակիցներ: Նրանց կազմում իրենց ակտիվ մասնակցությունը ցուցաբերեցին նաև Հայաստանի բժիշկ-սրտաբանները՝ մասնավորապես համալսարանական թիվ 1 հիվանդանոցի ընդհանուր և ինվազիվ սրտաբանության կլինիկայի բժիշկները՝ կլինիկայի ղեկավար պրոֆ. Հ.Ս. Սիսակյանի ղեկավարությամբ: Կոնգրեսի ընթացքում ներկայացվեցին այդ կլինիկայի բժիշկների գիտական աշխատանքները՝ Լաուրա Սահակյանի և Ցոլակ Սարգսյանի կողմից: Պրոֆ. Հ.Ս. Սիսակյանը նաև կոնգրեսի նիստերից մեկի ղեկավարն էր: Իրենց մասնակցությունը ցուցաբերեցին բժիշկներ՝ Ա.Ս. Տերտերյանը, Ռ.Ա. Մայրապետյանը, Հ.Կ. Կժդրյանը, Լ.Գ. Սահակյանը: Բժիշկ-սրտաբաններ Լաուրա Սահակյանը և Ցոլակ Սարգսյանը ներկայացրին գիտական աշխատանքներ՝ նվիրված սրտային անբավարության ախտորոշման և բուժման նոր մոտեցումներին:

Ամենամյա կոնգրեսն այս տարի նվիրված էր սրտային անբավարության արդի խնդիրներին, ախտորոշման նոր մեթոդներին, բուժման ժամանակակից մոտեցումներին: Կոնգրեսի ընթացքում ներկայացվեցին նորագույն հետազոտություններ, գիտական աշխատանքներ, սարքավորումներ, որոնք նվիրված են աշխարհում լայն տարածում ունեցող և բարձր մահացությանը օժտված հիվանդության՝ սրտային անբավարության ախտորոշմանն ու բուժմանը: Նման կոնգրեսները հնարավորություն են տալիս սրտային անբավարությամբ հետաքրքրվող սրտաբաններին, թերապևտներին, գիտնականներին հանդիպել, մտքեր և տեղեկատվություն փոխանակել, գիտելիքներ ձեռք բերել ժամանակակից սրտաբանության վերաբերյալ, ինչը նաև մեծ նշանակություն ունի մասնագետների առօրյա պրակտիկայում: Այն ոչ միայն նպատակաուղղված է կրթելու, այլ նաև հնարավորություն է ընձեռում ներկայացնել գիտական աշխատանքներ ինչպես սրտաբանության փորձագետների, այնպես էլ երիտասարդ գիտականների կողմից: Մասնակցությունը կոնգրեսին հնարավորություն ընձեռեց մեր մասնագետներին իրենց գիտական աշխատանքները ներկայացնել միջազգային լսարանին, քննարկել և մտքեր փոխանակել մասնագետների հետ, ինչն, իհարկե, մեծ նշանակություն ունի երիտասարդ գիտնականների մասնագիտական կայացման գործում: Աշխատանքները տպագրվեցին ԵՍԱ գիտական

ամսագրում: Բավականին կարևոր էր նաև ԵՍԱ գիտական կոմիտեի կողմից կատարված նորարարությունը, ինչն առաջին անգամ հնարավորություն ընձեռեց ուսանողներին անվճար մասնակցել վերոնշյալ կոնգրեսին: ԵՊԲՀ մագիստրատուրայի 1-ին կուրսի 628 խմբի ուսանողներ Միշա Պարոնյանը և Տիգրան Խաչատրյանը մեծ ոգևորությամբ օգտվեցին ընձեռված հնարավորությունից և ակտիվորեն մասնակցեցին ինչպես կոնգրեսին, այնպես էլ դրա ընթացքում անցկացվող սիրտ-թոքային վերակենդանացման գործնական դասընթացներին: Կոնգրեսին կրկնակի հաճելի էր մասնակցել, քանի որ այն տեղի ունեցավ Աթենքում, որն ունի հարուստ պատմամշակութային ժառանգություն, և բավականին հյուրընկալ և գեղեցիկ քաղաք է նմանատիպ միջոցառումներ անցկացնելու համար:



# ՃԱՆԱԶԵՆՔ ՄԵՐ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ, ԴՐԱՆՔ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ԵՆ

Առիթի բերմամբ հաճախ են հպարտությամբ նշում, որ «ԱՊԱԳԱ ԲԺՇԿԻ» առաջին համարից մինչ օրս տպագրվածները, ի թիվս այլ պահոցների, պահպանվում են նաև Հայաստանի ազգային գրադարանի գրապահոցներում:

Անդրադարձը այս գրադարանին նպատակ ունի ընթերցողին ներկայացնել այս հաստատությունը, որի մասին քչերը գիտեն, որը, սակայն, հանդիսանում է մեր ժողովրդի մտավոր մշակույթի պահպանման անանց արժեքներից մեկը: Այն ժամանակին կոչվում էր հանրային գրադարան և 1925-90 թթ. կրում էր նշանավոր պետական և հասարակական գործիչ Ալ. Մյասնիկյանի անունը, քանի որ վերջինս բավականին խոշոր ներդրում էր ունեցել գրադարանի կայացման գործում:

...Հանրայինում պարապելը ուսանողներիս համար մի առանձնահատուկ իմաստ ուներ, քանի որ առանց դիմափակոցի, երկարուկ սեղանի շուրջ կարող էիր նստած լինել շատ հարգելի, անվանի դասախոսիդ, ճանաչված գիտնականի, մեծ հեղինակություն վայելող ակադեմիկոսի կողքին...

Ճիշտ է՝ և՛ ակադեմիան, և՛ համալսարանն ունեին իրենց գրադարանները, ընթերցարահները, բայց հանրայինը յուրօրինակ ձգողականությամբ և, ամենակարևորը, չափազանց հարուստ գրաֆոնդով դեպի իրեն էր ձգում բոլորին՝ անկախ գիտական աստիճանից, տարիքից, նախասիրություններից:

Ալեքսանդր Թամանյանի նախագծած գլխավոր մասնաշենքի աստիճաններից դեպի ընթերցարահ բարձրանալն ինձ համար նման էր արարողության, որը դեպի տաճար է տանում, այս դեպքում՝ գիտության տաճար, գրքերի տաճար...



Հունիսի 4-ը Ազգային գրադարանի օրն է: Հիմնադրման 150-ամյակի առթիվ գրադարանը 1982-ին պարզևատրվել է «ժողովուրդների բարեկամություն» շքանշանով:

## Ա. ԹՈՐՈՍՅԱԼ

**Ա**զգային գրադարանը գրադարանագիտական, մատենագիտական, մեթոդական և տեղեկատվական համապետական գիտահետազոտական կենտրոնն է: ՀԱԳ-ը հայ տպագիր արտադրանքի ամենամեծ պահոցն է աշխարհում: Գրադարանի հարուստ գանձարանում պահպանվում են հայերեն առաջին տպագիր գիրքը՝ «Ուրբաթագիրքը» (1512թ., Վենետիկ), առաջին պարբերականը՝ «Ազդարարը» (1794թ., Մադրաս), առաջին տպագիր քարտեզը՝ «Համատարած աշխարհացոյցը» (1695թ., Ամստերդամ):

Գրադարանի հավաքածուն 2014-ի հունվարի 1-ի դրությամբ կազմում է ավելի քան 6,3 մլն հաշվառային միավոր: Դրանք գրքեր, ամսագրեր, լրագրեր, քարտեզներ, պլակատներ, ատենախոսություններ, նոտաներ, բացիկներ, նամականիշեր, օրացույցներ, մատենանիշեր, թղթադրամներ, տեսալսողական և էլեկտրոնային կրիչներ են:

ՀԱԳ-ի պատմության սկիզբը համարվում է 1832 թվականը, երբ հիմնադրվել է Երևանի արական գիմնազիայի գրադարանը, որի 18.000 մի-

ավոր հավաքածուի հիման վրա կազմավորվել է Հայաստանի ազգային գրադարանը: 1919-21թթ. գրադարանի առաջին տնօրեն Ստեփան Կանայանի ջանքերով հաջողվում է հավաքել, գնել և ի մի բերել Թիֆլիսի, Բաքվի, Ախալցխայի և Կարսի հայկական կազմակերպությունների, ընկերությունների, ուսումնական հաստատությունների գրադարանները և դրանք տեղափոխել Երևան: Առաջին հավաքածուները, որոնց հիմքի վրա ձևավորվում են գրադարանի ֆոնդերը, հայ պետական, հասարակական և մշակութային գործիչներ Ալ.Մյասնիկյանի, Ն. Արղուքյանի, Բ. Ղորղանյանի, Լեոյի անձնական գրադարաններն էին, ինչպես նաև Ներսիսյան դպրոցի և այլ ազգային, մշակութային, ուսումնական հաստատությունների հավաքածուները:

1990-ին գրադարանը վերանվանվել է Հայաստանի ազգային գրադարանի:

Գրադարանը տեղավորված է 4 մասնաշենքերում: Ամենահինը Ալ. Թամանյանի նախագծած գլխավոր մասնաշենքն է (1939թ.):

Տարբեր տարիներին գրադարանի ընթերցողներ են եղել հայ անվանի գրողներ Ավետիք Իսահակյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Պարույր Սևակը, Նաիրի Ջարյանը, հայտնի գիտնականներ Վիկտոր Համբարձումյանը, Սերգեյ Մերգելյանը, Ջոն Կիրակոսյանը, Էդուարդ Ջրբաշյանը և այլք:

Օրական շուրջ 900 ընթերցող է այցելում գրադարան: Տարվա ընթացքում օգտվողներին տրվում է 1,5 մլն միավոր գրականություն:

Գրադարանը կապեր ունի շուրջ 40 երկրների՝ 130-ից ավելի կրթամշակութային հաստատությունների, գրադարանների և կազմակերպությունների հետ:

1999-ից հուլիսի 4-ը նշվում է որպես Հայաստանի ազգային գրադարանի օր:

«Ապագա բժիշկ» թերթի խմբագրակազմը, շնորհավորելով իրենց օրվա առիթով, խորին շնորհակալություն է հայտնում Ազգային գրադարանի տնօրինությանը՝ մեր թերթին իրենց պահոցներում պատվավոր տեղ հատկացնելու համար:

# «ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ Ի ԳԱՐՈՒՆ-2014»

**Ա**ռաջին հարցը՝ ինչու՞ «**Ի Գարուն**»: Պարզվեց՝ այն պարզ պատճառաբանությամբ, որ ծրագրում նախատեսված էր դահլիճի ինտերակտիվ մասնակցությունը միջոցառմանը: Այսինքն՝ որոշ իրավիճակներում դահլիճը պետք է ընտրեր, թե առաջարկող երկու սցենարներից որո՞վ կարող են առաջնորդվել ելույթ ունեցողները:

**Ե**րկրորդ հարցը՝ ո՞րն էր նորը ամենամյա ավանդական փառատոնի այս տարվա ծրագրում: Պարզվեց, որ այս տարի առաջին անգամ, բժշկականի ուսանողներից բացի, առանձին թիմով փառատոնին հավասարի իրավունքով մասնակցում էին «Չերացի» ավագ դպրոցի սաները, ում ներկայացրած ծրագիրը ոչ պակաս հետաքրքրությամբ ընդունվեց հանդիսատեսի կողմից:

**Ե**րրորդ հարցը՝ ո՞վ էր ժյուրիի կազմում ընդգրկված ամենամեծ հետաքրքրությունը ներկայացնող անձը, ում մուտքը դահլիճ հենց առաջին պահից ուղեկցվեց չափազանց բուռն օվազիաներով և առանձնակի ջերմությամբ: Պարզվեց, որ ժյուրիի անդամներից ամենամեծ հետաքրքրությունը ներկայացնող անձը մեր համալսարանի դեղագիտական ֆակուլտետի շրջանավարտ Արամ MP 3-ն, ով ընդամենը մեկ-երկու տարի առաջ նույն այս բեմում հանդես էր գալիս սրամիտ կատակներով և գեղեցիկ երգերի հրաշալի, այսօր արդեն անհամեստ չի հնչի, եթե ասենք՝ անզուգական կատարումներով:

**Չ**րրորդ հարցը՝ ո՞վ առաջինը արձագանքեց հենց բեմում հանվանատրաստից ծրագրին ժյուրիի անդամներից որևէ մեկի մասնակցության՝ ուսանողների պահանջին: Արամ Սարգսյանը, նույն ինքը՝ Արամ MP3-ը, ով իր բնավորության ընդգծված համեստության դրսևորման ևս մեկ ապացույց հանդես բերեց՝ բեմից իջնելիս ասված իր խոսքի ավարտը ձևակերպելով այսպես. «Ես իմ ALMA MATER-ը երբեք չեմ մոռանա»:

**Յ**ինգերորդ հարցը կարելի է ձևակերպել այսպես՝ այս անգամ դահլիճի առաջին շարքերում նստած հանդիսատեսն առավել հանգիստ, առանց վախի ու անհանգստության դիտեց ողջ ծրագիրը, ի՞նչն էր այդ հանգստության պատճառը: Պատճառը բեմեզրին նախորդ տարի-



ներին առկա կրակե լեզվակների ժայթքման և դրան ուղեկցող կոկորդու աչքեր խողտացնող ծխագազի բացակայությունն էր:

**Յ**աջորդ հարցը վերաբերում է այս փառատոնի ընդգրկմանը, նրա նպատակներին: Եթե սկսենք նպատակներից՝ ձևակերպումը կլինի այսպիսին. գտնել, հայտնաբերել շնորհալիներին, հնարավորություն տալ նրանց ինքնադրսևորվելու, լավագույնների խրախուսմամբ շահագրգռել նրանց նմաններին՝ մասնակիցը դառնալու ուսանողական այն միջոցառումների, որոնց նպատակը օժտված ու շնորհալի երիտասարդներին մեկ գործի շուրջ համախմբելն ու միմյանց առավել մոտիկից ճանաչելու ու շփվելու հնարավորության ստեղծումն է:

**Ի**նչ վերաբերում է ընդգրկմանը՝ ապա այն չափազանց լայն էր, և ի պատիվ այս միջոցառման կազմակերպիչների է խոսում այն հանգամանքը, որ «Ուսանողական գարուն» և «Ուսանողական աշուն» փառատոները յուրօրինակ հանրագումարի են բերում ուսանողական տարբեր կառույցների կատարած աշխատանքները: Երբ ամփոփվում էին «Լավագույն դասախոս», «Լավագույն ամբիոն», «Լավագույն ուսանող», «Լավագույն.....» մրցույթները և խրախուսվում Արցախյան ազատամարտի մեր զոհերից մեկի՝ Լաերտ Ղավալյանի հիշատակին նվիրված շախմատային հուշանրցամարտի հաղթողները, ակնբախ էր դառնում այն հանգամանքը, որ հիշյալ մրցանակները շնորհողները օգտագործելով ուսանողական փառատոնի ընձեռած հնարավորությունը, նպատակ են հետապնդել առավել ընդգրկուն լսարանում ներկայացնել լավագույններին՝ որպես օրինակ:

**Ո**՞վ հաղթեց: Հաղթեց ուսանողական անսպառ, անկաշկանդ, երբեմն չափից մի փոքր ավելի ազատամիտ հունորը, կազմակերպվածությունը, ստեղծագործ միտքն ու ֆանտազիան, ուսումնական տարին ուրախ տրամադրությամբ ամփոփելու կամքը: Եվ, այնուամենայնիվ, այս ամենի մեջ ամենամեծ ներդրումն ունեցավ ստոնմատուլոգիական ֆակուլտետը: Իսկ մրցության կարվածությունը թուլացնում էին երգի և պարի «Մեդունի» համույթների մենակատարները: Միջոցառման ավարտին «Կոմիտաս» երաժշտախմբի ելույթը ազգային երաժշտության կատարմամբ տոնական այնպիսի տրամադրություն ստեղծեց, որ դեռ երկար ժամանակ ոչ միայն միջոցառման կազմակերպիչ-



**ՈՒՍ ՆԱԽԱԳԱՏԻ ԿԱՐԵՆ ԱԿՈՎՅԱՆԸ ԿԱՆԱԼՍԱՐԱՆԻ ՈՍԿԵ ՄԵՂԱԼՈՎ ԱՊԱՐՁԱՏՈՐԵԿ ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ:**

ները, այլև հանդիսատեսը չէին ցանկանում թողնել դահլիճը:

**Մ**իջոցառման անակնկալը: Անակնկալներից ամենամանակակալը թերևս բժշկական համալսարանի փիլիսոփայության ամբիոնի դոցենտ Սուսաննա Ղավալյանին հետնաբեմ ուղեկցելն ու մի քանի րոպեանոց թագուհու թագ ու թիկնոցով, «Աղջիկ եմ սասունցի» ազգագրական երգի նվագակցությամբ հետնաբեմից բեմ ուղեկցելն էր: Ի պատիվ սիրված դասախոսի պետք է նշել, որ ուսանողների պատրաստած «որոգայթներից» նա դուրս եկավ պատվով: Այս հարցում նրան մեծապես օգնեցին ոչ միայն հունորի զգացումը, այլև արտիստիկ բնատուր շնորհքը:



# ՓԱՌԱՏՈՆ, ՈՐ «ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ» ԱՆՈՒՆՆ Է ԿՐՈՒՄ



«Բարեկամություն» փառատոնը շուրջ 10 տարվա պատմություն ունի: Ինչ խոսք՝ վերջին տարիների միջոցառումները շատ ավելի շքեղ են, գունեղ, հարուստ ու... «համեղ», սակայն հիշատակության են արժանի այս շարքի առաջին միջոցառումները, որոնց հեղինակները ԵՊԲՅ ուսանողական խորհրդարանի արտասահմանցի ուսանողների խորհուրդն էր:

Տարիների ընթացքում ընդլայնվեց այս փառատոնի մասնակիցների թիվը՝ ի դեմս իրենց երկրները ներկայացնող արտասահմանցի ուսանողների:

Թե որքան կարևոր է այս միջոցառման նկատմամբ արտասահմանցիների պատասխանատվությունը, երևում է թեկուզ այն հանգամանքից, որ դրանց ներկա են լինում նաև արտասահմանցի ուսանողների հարազատները, ծնողները, ովքեր հաճախ հենց այս փառատոնին մասնակցելու նպատակով ժամանում են Հայաստան:

Փառատոնը ոչ միայն առիթ է դառնում ներկայացնելու իրենց ազգային խոհանոցն ու համադամ ուտեստները, այլև հնարավորություն է ընձեռնում ներկայացնել տվյալ երկրի ազգային տարազը, իրենց երկրի խորհրդանիշերը, երգը, պարը, ասմունքը...

Վերջին տարիներին այս միջոցառմանը սիրով մասնակցում են տվյալ երկրների դեսպանատների, Հայաստանում արտասահմանցի ուսանողների գործունեությունը համակարգող բազմաթիվ կառույցների, Հայաստանի Երիտասարդական հիմնադրամի ներկայացուցիչները, համալսարանի ղեկավար անձնակազմը և այլոք:

Ի դեպ՝ միջոցառումը կազմակերպվում է ԲՈՒՅ-ի ղեկավարության և Հայաստանի Երիտասարդական հիմնադրամի աջակցությամբ:



# ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ՝ «ԼԻՆԵՆՔ ՅՈԳԱՏԱՐ»

Բժշկականի ուսանողների իրագործած «Լինենք հոգատար» բարեգործական ծրագիրը նպատակ ունի օգնել անապահով ընտանիքներին, մասնավորապես՝ առողջական խնդիրներ ունեցողներին, հատկապես երեխաներին: Նախապատրաստական շրջանում անցկացված հանգանակությունը չափազանց հետաքրքիր էր և յուրօրինակ, որի էությունը կայանում էր նրանում, որ ընդամենը 300 դրամ նվիրաբերող մասնակիցները ջանում էին գտնել 15 հաղթող թխվածքաբլիթներից մեկը, որը հնարավորություն կտար ստանալ հաճելի և քաղցր անակնկալ:

Ծրագրի մյուս խմբում, որի մասնակիցները առաջինից երրորդ կուրսերի ուսանողներն էին, նույն պայմաններով՝ 300 դրամ վճարելով, կարող էին վիճակահանության սկզբունքով ընտրել հաղթող տոմսը:

Երկրորդ փուլը ցանկացողներին հնարավորություն էր տալիս նվիրաբերել խաղալիքներ, գրքեր, կենցաղային իրեր...

Այս փուլի ընթացքում կազմակերպված համերգին սիրով իրենց բարեգործական մասնակցությունը բերեցին սիրված կատարողներ Ռուբեն Յախվերդյանը, Դավիթ Ամալյանը, Կարեն Մամիկոնյանը, ինչպես նաև «Հայ սուպերսթար-2», «Հայաստանի ձայն» ծրագրերի հաղթողները, համալսարանի նորաստեղծ «Կոմիտաս» երաժշտախումբը, «Մեղունի» էստրադային համույթի գեղարվեստական ղեկավար Կարինե Աբրահամյանը, «Առնո Բաբաջանյան» երաժշտական մրցույթի մասնակից և ԵՊԲՀ «Մեղունի» էստրադային համույթի անդամ Աիդա Դանիելյանը, ԵՊԲՀ ՈՒՀԱ «ԱՐՄՍԵԴ» թիմը: Համերգին մասնակցել ցանկացողները հանգանակեցին 1000-ական դրամ:

«Լինենք հոգատար» միջոցառումը ցույց տվեց, որ բժշկականի ուսանողներին խորթ չէ բարեգործության բարձր զգացումը:



# ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔԵՐ ԵՎ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ...



Դպրոցական կյանքն անզնահատելի հարստություն է, որը տարիներ հետո ավելի թանկ ու քաղցր է դառնում: Դպրոցական տասներկու տարիներն ամփոփվում են «Վերջին զանգ» արարողությամբ: Այդ օրը յուրատեսակ, աննկարագրելի զգացողություններ են խառնվում դպրոցականի հոգում, ու ժպիտը թախիծի հետ՝ շնորհակալության, հրաժեշտի խոսքեր է ձոնում ուսուցիչներին: Հենց այդ օրն են պատանիները հասկանում, որ իրենց առջև նոր, ավելի պատասխանատու շրջան է բացվում, որից մեծապես կախված է նրանց ապագան:

Երևանի Մ.Յերացու անվան պետական բժշկական համալսարանի «Հերացի» ավագ դպրոցում սովորող 87 շրջանավարտների հիշողության մեջ մայիսի 23-ը կմնա որպես կյանքի ամենավառ, հուզումնալից և կարևորագույն պահ, քանի որ նրանց համար այդ օրը դպրոցական զանգը հնչեց վերջին անգամ:

Դպրոցի մուտքի մոտ աշակերտներին ողջունեց և իր ուղերձը հղեց դպրոցի տնօրեն Նարինե Սարգսյանը. «Այսօր մենք ձեզ հրաժեշտ ենք տալիս և մեծ հույսերով ճանապարհում դեպի նոր կյանք: Համոզված եմ կյանքի որ ոլորտում էլ ներդնեք ձեր ստացած գիտելիքները, կորսևորեք նաև ձեր լավագույն հատկանիշները և մարդկային բարձր արժանիքները, որոնք ձեր մեջ սերմանել է դպրոցը՝ այս երեք տարիների ընթացքում»:

Դպրոցական զանգն աշակերտներին կանչեց վերջին դասի, որի ընթացքում ուսուցիչներն իրենց խորհուրդներն ու շնորհավորանքները հղեցին շրջանավարտներին:

«Վերջին զանգ» միջոցառման հանդիսավոր մասը տեղի ունեցավ «Golden Palace» հյուրանոցային համալիրում, որին ներկա էին ԵՊԲՀ ղեկավարը, հետբուհական և շարունա-



կական կրթության գծով պրոռեկտորը, դպրոցի ուսուցչական կազմը, ծնողներ և հյուրեր:

Ողջունելով և դպրոցն ավարտելու կապակցությամբ շնորհավորելով աշակերտներին՝ ԵՊԲՀ ղեկավար Միքայել Նարինյանը մաղթեց նրանց նորանոր հաջողություններ և ձեռքբերումներ՝ նոր կյանքի երկար ճանապարհին: Նա հատկապես կարևորեց ուսուցիչների դերը մատաղ սերնդի դաստիարակության գործում ավելացնելով. «Թեև մոտ 30 տարվա մանկավարժական գործունեության փորձ ունեմ, սակայն ինձ մանկավարժ չեմ համարում, քանի որ իրական մանկավարժները, ըստ ինձ, ուսուցիչներն են»:



# EMOTIONS, EXCITEMENT, WORDS OF APPRECIATION, CONGRATULATIONS

The day of May 23 was cherished in the Heratsi N87 School graduates as the most exciting and important moments of life since the school bell rang for the last time for them.

At the school entrance the pupils were welcomed by the schoolmaster Narine Sargsyan: "Today we send you a farewell message and accompany you to a new life with big hopes. I am sure that wherever you apply the knowledge you've got at school, you will show your best features and your high values which have been sown by the school during those three years".

The school bell called the pupils to the final lesson during which teachers gave their advice and also extended congratulations to school graduates.

They celebrated the "Last Bell" at "Golden Palace" Hotel Complex where YSMU Rector, Vice Rector for Postgraduate and Ongoing Education, school teachers staff, parents of graduates and guests were also present.

Welcoming and congratulating the graduates YSMU Rector wished them success and achievements during the new long path of life. Particularly he considered the role of teachers in educating the younger generations of great importance.

"Though I have around 30 years of pedagogical experience, but I don't consider myself a pedagogue since the real pedagogues, I think, are the teachers", was mentioned by the Rector. He addressed congratulations and wished success to teachers in their hard work full of responsibilities.

Worth mentioning that YSMU Heratsi high school gave the second graduate this year.



# «ՄՈՒՐԱՑԱՆ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՀԻՎԱՆՂԱՆՈՑՈՒՄ ՊԱՐԳԵՎԱՏՐԵՑԻՆ ԲՈՒԺՔՈՒՅՐԵՐԻՆ

«Մուրացան» համալսարանական հիվանդանոցում կազմակերպվել էր հանդիպում-սեմինար, որը նվիրված էր բուժքույրերի միջազգային օրվան: Միջոցառմանը ներկա էին ԵՊԲՀ կլինիկական աշխատանքների գծով պրոռեկտոր Արմեն Մինասյանը, ԵՊԲՀ աշխատակազմի ղեկավար Գագիկ Միրիջանյանը և «Մուրացան» համալսարանական հիվանդանոցի գլխավոր բժիշկ Բագրատ Բավեյանը:

Ավագ բուժքույր Անահիտ Օհանյանը հակիրճ և բովանդակալից ներկայացրեց բուժքույրական գործի ստեղծման պատմությունը, ինչպես նաև վերջին երկուսուկես տարում «Մուրացան» հիվանդանոցային համալիրի բուժքույրական անձնակազմի կատարած աշխատանքների հաշվետվությունը, և շնորհավորելով մասնագիտական տոնի կապակցությամբ՝ գործընկերների անունից խոստացավ այսուհետ էլ ավելի բարեխիղճ ու սրտացավ աշխատանքով բարձր պահել համալսարանական հիվանդանոցի անունը:

Այնուհետև «Անհետաձգելի իրավիճակներում արագ գնահատման նոր մոտեցումները» թեմայով շնորհահնդես ներկայացրեց ԵՊԲՀ մագիստրատուրայի 6-րդ կուրսի ուսանողուհի Սարգարիտա Դիլոյանը, ինչը մեծ ոգևորությամբ ընդունվեց ներկաների կողմից:

ԵՊԲՀ կլինիկական աշխատանքների գծով պրոռեկտոր Արմեն Մինասյանը նույնպես շնորհավորեց բուժքույրերին՝ մասնագիտական տոնի կապակցությամբ և այդ առիթով ԲՈՒՀ-ի ղեկավարության կողմից պատվոգրերով պարգևատրեց մի խումբ բուժքույրերի:

Պրոռեկտորը, նշելով, որ բուժքույրերի դերը բուժօգնության իրականացման գործում անզնահատելի է, և նրանք ցանկացած բուժօգնության դեմքն են, մաղթեց, որ միշտ առողջ ու զեղեցիկ լինեն և շարունակեն իրենց դժվարագույն աշխատանքն իրականացնել բժիշկների հետ և նրանց կողքին:

«Հերացի» համալսարանական պոլիկլինիկայի ղեկավար Աննա Բայանը ևս, շնորհավորելով բուժքույրերին, համալսարանի ղեկավարության կողմից նրանց մեղվի պատկերով սիմվոլիկ հուշամեդալներ նվիրեց:

Միջոցառման ավարտին իր ղեկավարած բուժօգնության բուժքույրերին շնորհավորեց «Մուրացան» համալսարանական հիվանդանոցի գլխավոր բժիշկ Բագրատ Բավեյանը, ով մաղթեց նրանց առողջություն, երջանկություն և հաջողություններ, նշելով, որ կատարված աշխատանքը պետք է գնահատվի, ինչպես նաև շնորհակալություն հայտնեց ԲՈՒՀ-ի ղեկավարությանը՝ իրենց մշտապես աջակցելու և կատարած աշխատանքն ըստ արժանվույն գնահատելու համար:



«ԱՊԱԳԱ ԲԺՇԿԸ» սիրով է իր էջերը տրամադրում այն շրջանավարտներին, հետաքրքրվում նրանց ճակատագրով, ովքեր ուսանողական տարիներին եղել են իր լավագույն ընթերցողների թվում, աչքի ընկել ուսման մեջ և, հատկապես, կազմակերպչական աշխատանքներում՝ համոզված, որ նրանց օրինակը այսօրվա ուսանողի համար հետաքրքիր և ուսանելի կլինի: Այս թողարկման հյուրերը Ձաքար Խոջաբաղյանն ու Էմիլ Ավետիսյանն են:

# ՊՈՒՇԿԻՆՅԱՆ ՊԱՐԱՅԱՆԴԵՍ

Որոշեցի ուսումնա շարունակել ասպիրանտուրայում: Հրավեր ունենալով Կազանից (որտեղ մեր ԲՈՒՀ-ի լավագույն շրջանավարտներից Աննա Վանեսյանն է ուսանում), մասնակցեցի ԿԳՆ ամենամյա ծրագրին և բավարարելով անհրաժեշտ քննական միավորները մրցույթի հաղթողների շարքում սպասում էի ՌԴ-ից հայտի բավարարմանը: Ենթան ասած ինձ համար էլ տարօրինակ կերպով Կազանի փոխարեն Մոսկվան որոշեց ինձ ուղարկել Յարոսլավ: Ի դեպ՝ նշեմ, որ նման խնդրի հետ բախվել եմ ոչ միայն ես: Ամեն դեպքում շնորհակալ եմ կատարվածի համար, քանի որ, հանգամանքների բերումով, հայտնվեցի Ռուսաստանի լավագույն հիվանդանոցներից՝ Ն.Վ. Սոլովյովի անվան հիվանդանոցում՝ ձեռքի վիրաբուժության, միկրովիրաբուժության և պլաստիկ վիրաբուժության բաժանմունքում՝ Ռուսաստանի լավագույն մասնագետներից մեկի՝ Վյաչեսլավ Վասիլևիչ Կլյուչևսկու ղեկավարած ամբիոնում, իսկ գիտական ղեկավարս Ռուսաստանի լավագույն մասնագետներից մեկը՝ Կիրիլ Պավլովիչ Պշենիսնովն է: Պետք է անկեղծորեն խոստովանեմ, որ Հայաստանում անցած դպրոցը բավականին հարուստ էր, և կատարված բարդ վիրահատությունների տեսանկյունից բավական մրցունակ եմ:

Հիմա՝ ուսանողական կյանքի վերաբերյալ: Կլինիկական ասպիրանտուրան շատ ժամանակ չի թողնում ուսանողական կյանքով ակտիվորեն զբաղվելու համար, բայց, այնուամենայնիվ, շփումները և հասարակական կյանքին մասնակցությունը չեն կարող տեղ չգտնել իմ կյանքում:

Այստեղ պետք է նշեմ, որ բավականին հաճախ եմ կազմակերպվում գի-



տական օլիմպիադաներ, ուսանողական գիտական մրցույթներ, ինչն ուրախալի փաստ է և խթան ուսանողների մասնագիտական հմտությունների ձևավորման համար:

Ինչ վերաբերում է մշակութային կյանքին՝ վերջերս առիթ ունեցա մասնակցելու 2009-ից Յարոսլավլի պետական բժշկական ակադեմիայում կազմակերպվող ամենամյա «Պուշկինյան պարահանդես» միջոցառմանը: Մեկնարկման սկզբից ի վեր՝ այն ավելի ու ավելի մեծ համբավ է վայելում, իսկ անցած տարի միջոցառմանը մասնակցել են ներկայացուցիչներ նաև դասախոսական կազմից: Այն բավական հետաքրքիր միջոցառում է իր բնույթով: Մասնակիցները ներկայանում են պուշկինյան ժամանակաշրջանի հագուստով, որը հաճախ ձեռք է բերվում վարձակալությամբ՝ մասնակցի միջոցներով: Միջոցառման ժամա-

նակ հնչում են Պուշկինի բանաստեղծություններից, ներկայացվում թատերական փոքրիկ բեմադրություններ, և, բնականաբար, շեշտը դրվում է պարային ծրագրի վրա: Պարացանկը բավական հարուստ է վալսեր, կոնտրդանս, կադրիլներ և այլն: Հիմնական ընտրությունը պատմական պալատական պարերից է: Այս տարվա պարուսույցներն արդեն ԲՈՒՀ-ի ուսանողներից էին: Ընդհանուր առմամբ՝ միջոցառումն անցնում է բավականին հետաքրքիր:

Պետք է նշեմ նաև, որ շատ ծրագրեր ընդհանուր են, մասնավորապես մեզ մոտ անցկացվող «Բարեկամություն» փառատոնը, որին համարժեք այստեղ անց է կացվում «Ազգերի մշակութային օրեր» միջոցառումը:

Այն հարցին, թե կարելի՞ է պուշկինյան պարերի երեկոյի պես միջոցառում ներառել մեր ԲՈՒՀ-ի մշակութային ծրագրերի մեջ, կասեմ՝ այո, շատ

տեղին կլինեն ազգային պարերի երեկոն՝ ազգային տարազներով: Ի դեպ՝ պետք է շնորհավորեն մեր ուսանողական խորհրդարանին՝ նոր կազմավորված «Կոմիտաս» խմբի առթիվ: Համացանցում տեղադրված սիրողական նկարահանումներից դատելով էլ կարելի է վստահորեն ասել, որ խմբին մեծ բեմեր են սպասվում: Ուրախալի է, որ վերջին տարիներին, շնորհիվ ուսանողական խորհրդարանի գիտակից թիմի, բավականին լուրջ ու արմատական աշխատանքներ են տարվել և տարվում ազգային ինքության պահպանման ուղղությամբ: Նույնը պետք է ասեն նաև գիտական առումով հատկապես շեշտելով «մեդիկալ կոնսուլիումի» շրջանակում կազմակերպվող բժշկական հավաքները: Այնուամենայնիվ գտնում են, որ ԲՈՒՀ-ը (և, առհասարակ, պետությունը) առավել մեծ ուշադրություն պետք է դարձնի գիտության զարգացմանը: Վերջերս Մոսկվայում տեղի ունեցած պլաստիկ վիրաբույժների միջազգային սիմպոզիումի ժամանակ մասնակիցների մեջ մեծ թիվ էին կազմում հայ մասնագետները: Առհասարակ բժշկական ասպարեզում բավականին հզոր մասնագետներ ունենք, և ճիշտ կազմակերպման արդյունքում՝ Հայաստանը կարելի է դարձնել աշխարհի լավագույն բուժօժանությունն ապահովող և գիտական ամենալուրջ արտադրանք տվող երկրներից մեկը: Ընդգծում են, ոչ թե բուժօժանություն և գիտություն արտահանող, այլ՝ ապահովող: Պարզապես պետք



են ազգային գիտակցությամբ նվիրյալ մասնագետներ և կազմակերպչական աշխատանք, իհարկե, նաև պետական համարժեք աջակցություն:

Պետք է նշեն, որ այստեղ բավական թվով հայ ուսանողներ կան, ցավոք նրանցից շատերը Հայաստան այցելել են մանուկ հասակում, իսկ նրանցից ոմանք անգամ հայերեն գրել և կարդալ չգիտեն՝ չնայած խոսում են հայերեն: Սա շատ ցավոտ խնդիր է: Մենք, ուսանողական խորհրդարանի հետ, հիմա մտածում ենք, ինչ-որ ելք գտնել: Կարծում են, փոխանակային ծրագրերը շատ օգ-

տակար կարող են լինել այս հարցում: Ուսանողներից շատերը, հնարավորություն ունենալով ամառային պրակտիկա անցնել Հայաստանում, կարող են համատեղել մի քանիսը մեկում: Սեզնից մնում է միայն համարժեք ընդունելություն և հնարավորության դեպքում հայերեն լեզվի արագացված դասընթացներ: Վստահ են լավագույնը դեռ առջևում է: Բարևներս բոլորին, մինչ հանդիպում ամառային արձակուրդներին՝ Հայաստանում:

**ԶԱՔԱՐ ԽՈՋԱԲԱՂՅԱՆ**



# ՄԵՐ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ

Ես միշտ էլ այն կարծիքին եմ եղել, որ օժտված մարդկանց զարգացումը միակողմանի չի լինում: Նմանների էության մեջ լինում են բազմաթիվ «գերակայություններ», որոնցից մեկը առաջատար է լինում: Բայց գալիս է պատեհ պահը, և արթնանում են նախասիրություններ, որոնք թվում են անակնկալ, անսպասելի, սակայն տեղին և ճիշտ ժամանակին: Այս նկատառումը լիուլի վերաբերում է ԵՊԲԴ 2013 թվականի շրջանավարտ Էմիլ Ավետիսյանին, ով ներկայումս սովորում է Մոսկվայի Ի.Մ. Սեչենովի անվան առաջին բժշկական համալսարանի կլինիկական օրդինատուրայում՝ քիթկոկորդականջաբանություն մասնագիտությամբ, դեկավար՝ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, ՌԴ կենտրոնական դաշնային շրջանի գլխավոր ԼՕՌ բժիշկ Վ.Ս.Սվիստունչկին: Ուսանում է այնտեղ պետպատվերի շրջանակներում, քանզի անցյալ տարի ԿԳ նախարարության կողմից հայտարարված մրցություն ոչ միայն հավաքեց անհրաժեշտ անցողիկ միավորներ, այլև իր բնագավառում ցուցաբերեց լավագույն արդյունքը հանրապետությունում: Մեր հարցմանն ի պատասխան՝ Էմիլն ասաց, որ լի է Հայաստան վերադառնալու պատրաստակամությամբ, քանզի իր և՛ անձնական, և՛ մասնագիտական ապագան տեսնում է հայրենի հողի վրա և արտերկրում ձեռքբերած գիտելիքներն ու փորձը ճիշտ է համարում կիրառել հօգուտ սեփական ժողովրդի: Այն, որ Էմիլը մեր լավագույն ուսանողների մեջ ամենաառաջինների թվում էր, գաղտնիք չէ. «Մխիթար Հերացու» անվան կրթաթոշակ, ՀՀ վարչապետի մրցանակ, «Հայ համայնքը՝ հայ ուսանողությանը» ֆոնդի կրթաթոշակ, ԵՊԲԴ ավարտական կարմիր դիպլոմ, ուսանողական տարիներին տպագրված գիտական հոդվածների ու ակնարկների համահեղինակ, Հայաստանի ժուռնալիստների միության անդամ, ուսանողական խորհրդարանում անցկացված 7 ակտիվ տարիներ հանգամանքներ, որոնք փաստում են նրա՝ լավագույնների մեջ բացառիկը լինելու իրողությունը: Երկու տարի Էմիլ Ավետիսյանը հանդիսացել է «Մեդիկոս» ուսանողական ամսաթերթի գլխավոր խմբագիր: Ինձ՝ որպես լրագրողի, չափազանց դուր էին



գալիս ոչ միայն իր իսկ ստորագրությամբ հոդվածները, այլև որպես խմբագիր նրա աշխատանքային ոճն ու գործունեությունը: Մոսկվայում հայկական մշակույթի նյութերին ծանոթանալիս բոլորովին պատահաբար համացանցում աչքիս զարնվեց նրա լուսանկարը, որը մեկ անգամ ևս հավաստիացրեց, որ շնորհալի մարդու շնորհները բազմաթիվ են: Կարծում եմ՝ անհատը պետք է իր մեջ պրպտի,

գտնի և անհրաժեշտության դեպքում կիրառի այն թաքնված շնորհները, որոնք մարդուն տրվում են վերուստ: Մեր հարցմանն ի պատասխան՝ ստացանք Էմիլի նամակը, որի վերջին տողը չափազանց խոսում է. «Կարոտով՝ առ Հայաստան»: Ուրիշ կերպ չէր էլ կարող լիներ, այլ կերպ էս նրան չէմ էլ պատկերացնում:

Ս. ԹՈՐՈՍՅԱՆ



# «ԿԱՐՈՏՈՎ՝ ԱՌ ԶԱՅԱՍՏԱՆ»

Օրեր առաջ, Մոսկվայի հայկական թատրոնի բեմում տեղի ունեցավ «Խենթ» հայկական փորձարարական թատրոնի «Չարչարանքներ ըստ Արտաշեսի» թատերական բեմադրության առաջնախաղը: Ներկայացմանը ներկա էին Ռուսաստանի հայերի միության ողջ ղեկավար կազմը՝ նախագահ Արա Աբրահամյանի գլխավորությամբ, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Ռուսաստանի ու Նոր Նախիջևանի թեմի առաջնորդ Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանը, Մոսկվայի հայ համայնքի բազմաթիվ ներկայացուցիչներ, այլազգի հյուրեր:

Թատերախմբի կազմում ընգրկված 30 հոգուց և ոչ մեկը պրոֆեսիոնալ դերասան չէ՝ նրանք լեզվաբաններ, տնտեսագետներ, բժիշկներ, հոգեբաններ, լրագրողներ են:

Նպատակ ունեինք առավել հանգամանալի ծանոթանալ սեփական ժողովրդի պատմությանն ու մոսկովյան հանդիսատեսին հրամցնել հայազգի փառապանծ պատմությունից մի դրվագ: Սիրողական դերասաններիս առջև





դժվարին խնդիր կար. ներկայացնել հայոց արքա Արտաշես Առաջին Մեծի ողբերգական ճակատագիրն ու նախաքրիստոնեական Հայաստանի վայրիվերումներով լի կյանքը: Տողերիս հեղինակը մարմնավորում էր թագադիր իշխան ու հայոց սպարապետ Սմբատ Բագրատունու կերպարը:

Մոսկվայի հայկական թատրոնի գեղարվեստական ղեկավար Սլավա Ստեփանյանի ու նույն թատրոնի դերասան Զիտա Բադալյանի անմիջական մասնակցության, արժեքավոր խորհուրդների ու սրտացավ վերաբերմունքի շնորհիվ մեր նախաձեռնությունը պսակվեց հաջողությամբ: Հանդիսատեսը զնահատեց դեբյուտանտներիս խաղը հոտնկայս ծափահարություններով: Հուսով եմ, որ յուրաքանչյուր հանդիսատես իր սրտում տարավ Հայից ու Հայաստանից մի մասնիկ:

«Խենթ» հայկական փորձարարական թատրոնը խոստանում է շարունակել իր համեստ գործունեությունը՝ ի փառս հայ մշակույթի:

**Կարոտով՝ առ Հայաստան  
ԷՄԻԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ**





## ԴԻՄԱՆԿԱՐԻ ՓՈՐՁ

*Մեկ տարի առաջ իր մահկանացուն կնքեց պետական, քաղաքական, հասարակական ակտիվ գործիչ, Խորհրդային Հայաստանի տնտեսական հզորացման գործում իր անուրանալի ավանդը ներդրած, քաղաքացիական ակտիվ դիրքորոշմամբ, հատկապես՝ մեր ժողովրդի ճակատագրի հանդեպ ունեցած ընդգծված վերաբերմունքով իր ժամանակակիցներից շահեկանորեն առանձնացող անհատականություն, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Միքայել Մկրտչի Մինասյանը: Մարդ, ով իր կյանքը ապրել է երկու դարի, երկու հազարամյակի, երկու հակամետ հասարակարգերի բախման հատույթում, ում կենսագրությունը ներառում է մեր ժողովրդի պատմության վերջին հարյուրամյակի բոլոր դառնություններն ու հաջողությունները, կորուստներն ու նվաճումները, ձեռքբերումներն ու հիասթափությունները, ծախողումներն ու որոնումները: Ահա ինչու՝ նրա կյանքի ուղին եղել է բարդ ու հակասական, սակայն՝ իրագործումների, ինքն իրեն առաջադրած խնդիրների պատվախնդիր լուծման բազմաբարդ մի ընթացք, որի յուրաքանչյուր հատվածը կարող էր հիմք դառնալ ընդարձակ վերլուծությունների, գնահատումների, արժևորումների:*

*Օժտված այնպիսի անհատականության օրինակով, ինչպիսին Միքայել Մինասյանն էր՝ ճակատագիրը կարծես փորձել էր ստուգել մարդ անհատի դիմացկունության վերջնագիծ-սահմանը: Օժտելով նրան բարձր ինտելեկտուալ մակարդակով, կազմակերպչական մեծ ունակություններով, զգայուն ու բնածին բարեկրթությամբ, ներողամտության ու համբերատարության անսպառ պաշարով՝ նաև բաժին էր հանել իր և ծնողների ապրած ժամանակահատվածի ամենածանր փորձություններն ու հարվածները, որոնք կրավարարեին մի քանի մարդու՝ կոտրվելու և անդամալի հուսահատությունից դառնալու ծախողված անհաջողակ:*

*Սակայն պրոֆեսոր Մինասյանն առաքելություն ուներ քայլել ժամանակին համընթաց, հասարակարգի ընձեռած հնարավորությունների սահմաններում՝ հաճախ շրջանցելով այդ հնարավորությունները՝ իր ժողովրդի բարգավաճմանը ծառայել հետևողականորեն ու գործիմացությամբ՝ օգտագործելով տարիների վաստակով ձեռք բերած վարկն ու վստահությունը:*

*Գրել Միքայել Մինասյանի մասին և՛ հեշտ է, և՛ չափազանց դժվար: Հեշտ է, քանի որ չափազանց շատ են նրա գործունեության արդյունքում հիշատակման արժանի դեպքերը, փաստերը, իրադարձությունները: Դժվար, քանի որ ինքն այնքան համապարփակ ու ընդգրկուն է ներկայացրել իր ժամանակը, գործունեությունը, գիտական վերլուծության ենթարկել մեր նորօրյա պատմությունն ու ժամանակների բարդ հանգույցները, տալով դրանց հանգուցալուծման իր առաջարկները, որ չես կարողանում զսպել գայթակղությունը՝ դրանք ցիտելու: Իսկ ցիտել ամենակարևորները անհնար է, քանի որ մեջբերման արժանի մտքերն ու ընդհանրացումները ամփոփված են նրա գրքերում, գիտական հոդվածներում, բժշկական համալսարանի ուսանողների համար կարդացված նրա հրաշալի վերլուծական դասախոսություններում:*

Մարդկանց մեծամասնության կենսագրությունը սկսվում է իրենց ծննդյան պահից: Սակայն կան անհատներ, ում կենսագրության առաջին էջերը սկսվում են իրենց իսկ ծնողների կենսագրությամբ: Մկրտչի Մինասյանի կենսագրությունը սկսվում է իր ծնունդից շատ ավելի վաղ, ինչի առիթով գրում է. «... Հայոց աշխարհում գոյություն ունի կարգ, չգրված օրենք. երբ մարդուն հանդիպում են առաջին անգամ՝ առաջին հարցը, որ առաջանում է, այն է, թե որտեղացի է, և ո՞վքեր են ծնողները... Ծնողներս արևմտահայեր են, դարսեցիներ: Տատերիս ու պապերիս՝ ինչպես հորս, այնպես էլ մորս ծնողներին չեմ տեսել: Նրանց բոլոր ազգականներիս, թուրքերը «կտրել» են: Հորաքրոջս և հորեղբայրներիս կենդանի վառել են մարագում: Երբ այսօր խոսք է գնում ցեղասպանության մասին, աչքերիս առջև պատկերվում է հորս դեմքը, երբ պատմում էր իր 12 տարեկան կենդանի ողջակիզված Անդրանիկ եղբոր մասին»:

1927-ին ծնված տասնամյա տղայի ճակատագրում 1937-ը թողեց իր կնիքը, հոր բռնարարքի ենթարկվելը, հետագայում արդարացվելուց հետո անգամ, մղձավանջային հետևանքների պատճառ դարձավ: Երկրորդ համաշխարհային պատերազմը նրան որբացրեց՝ ստիպելով վաղ տարիքից կքվել հոգսի տակ, որպես ընտանիքի ավագ տղամարդ իր հովանու տակ վերցնել մորը և կրտսեր եղբորը:

Սակայն, որքան էլ հոգսաշատ, նրա պատանեկությունը եզրափակվեց միջնակարգ դպրոցը ոսկե մեդալով ավարտելով:

Ուսումնառությունը Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների և տնտեսագիտական ֆակուլտետներում նույնպես ավարտվել են գերազանցության դիպլոմներով: Այնուհետև թեկնածուական, դոկտորական թեզերի պաշտպանություններ...

Նրա ողջ կյանքը ընթացել է վերելքի ուղիով՝ կուսակցական, հասարակական-քաղաքական աշխատանքներ, գիտամանկավարժական գործունեություն, խորհրդային տարիներին կառավարման բարձրագույն օղակներում գիտության, կրթության, մշակույթի բնագավառների բազմաբնույթ աշխատանքների համակարգում:

Այս տարիների մասին չափազանց խոսում է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանի գնահատականը Մկրտչի Մինասյանի գործունեությանը. «... Նրա կազմակերպչական տաղանդն ու ինտելեկտուալ մեծ կարողությունները առանձնակի ուժով դրսևորվեցին, երբ ընտրվեց և երկար տարիներ վարում էր Երևանի 26 կոմիսարների անվան կուսակցության շրջկոմի քարտուղարի և ապա՝ առաջին քարտուղարի պաշտոնը: Այդ տարիներին էր, որ ես հանդիսանում էի շրջանում մեծ տեսակարար կշիռ ունեցող մաթեմատիկական հաշվիչ մեքենաների գի-

տահետագոտական ինստիտուտի տնօրենը և Միքայել Մինասյանի հետ գտնվում էի պաշտոնական ու ընկերական բնույթ կրող ամենօրյա փոխհարաբերությունների մեջ, որոնք այնուհետև շարունակվեցին մեր կյանքի և գործի հետագա ամբողջ ընթացքում:

Մեծ են եղել Երևանի կառուցապատմանը, զարգացմանը նրա մատուցած ծառայությունները: Նա մայրաքաղաքը ներկայացնող բոլոր կառույցների ճանաչված և հեղինակություն վայելող գործիչներից էր, և դա ոչ միայն շնորհիվ անձնուրաց աշխատանքի, այլև մարդկային առաքինի նկարագրի:

Շրջանում տեղաբաշխված միութենական գործարանների ղեկավարմանը, դրանց արդյունավետ գործելուն ցուցաբերած օգնությունն էր այն նախադրյալներից մեկը, որ նա պատշաճ հարգանք էր վայելում այդ ձեռնարկությունները կառավարող միութենական գերատեսչություններում»:

Միքայել Մինասյանի նկարագրին անդրադառնալը նպատակ է հետապնդում ներկայացնել ազատախոհ, հայրենասեր, ներքին մաքառումներով լեցուն մարդու վարքագիծը այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ նման անհատը հարկադրված է ծավալել այնպիսի գործունեություն, որը արտաքուստ կարող է հակադրված թվալ նրա եռանդը:

Այսինքն՝ երկու հասարակարգերում իր գործունեությունը ծավալած անձնավորության նկարագրին անդրադառնալով՝ փորձ է արվում ներկայացնել խորհրդային ռեժիմի պայմաններում ազգօգուտ գործունեություն ծավալած գործիչ-մտավորականին:

Նշեն միայն մեկ հանգամանք. հենց միայն անցյալ դարի 70-80-ական թվականներին գրողների միության ակտիվությունը, մի քանի օր տևող բանավեճերը, որոնք կարող էին շարունակվել ողջ գիշեր, ընդգրկում էին այնպիսի հարցեր, որոնք ժամանակի համար կարող էին վտանգ ներկայացնել, որից կարող էին տուժել մեր անվանի գրողները, ովքեր իրենց պոռթկուն հախուռնությամբ ելույթներ էին ունենում խորհրդային Միության պայմաններում: Հասկանալի է շրջկուրմի առաջին քարտուղարի դերը չափազանց կարևոր էր. մի կողմից չձգվել այդ արթնացող ակտիվությունը, մյուս կողմից՝ այն հեռու պահել խորհրդային ապարատների մամլիչ պատժամիջոցներից:

Մ. Մինասյանը ոչ միայն ականա-

տեսն էր քաղաքական կյանքում 20-րդ դարի ամենանշանակալի իրադարձության՝ ԽՍՀՄ-ի փլուզման, այլև այդ գործընթացի սթափ զնահատողը, այն նեգատիվ երևույթներից զգուշացնողը, որոնք պետք է ի հայտ գային տարիներ անց:

Նրա բազմաթիվ գրքերից ինձ համար սեղանի գիրք է դարձել «Ժամանակը, մարդը և նրա գործը» հուշագրությունը, որում տրոփում է իր ժամանակի զարկերակը և ընդգծվում հետագայի համար զարմանալիորեն ճշգրիտ տրված կանխատեսումները, որոնք առանց բացառության կայացան և կայանում են առ այսօր:

Հիշյալ գիրքը, ի տարբերություն համանման հուշագրությունների, պարունակում է փաստացի վավերագրություններ՝ գրված գեղարվեստական վարպետությամբ, լիրիկական շնչով՝ այն ժամանակների մասին, որոնք կոչվում էին խորհրդային:

Նրա բոլոր գրքերը արժեքավոր են, սակայն վերջինս յուրօրինակ ամփոփում է՝ ընդգրկում հուշագրական և սոցիոլոգիական հարուստ նյութի հիման վրա, որում հեղինակը նպատակադրվել է հանդես գալ ազնիվ հուշագրությամբ, որը խնդիր ունի անկողմնակալ իմաստավորել ժամանակը, ցույց տալով՝ ո՞րն է այսօրվա պատմական արժեքը: Ինչի առիթով նա նշում է. «Հիշողություններում հարություն է առնում անցյալը, ի մի են բերվում անցյալի տարբեր տարիների վճռորոշ դեր կատարած երևույթները, իրադարձությունները, մարդկանց և նրանց տարբեր խավերի, խմբերի գործողությունները՝ արդյունքները: Նաև՝ թե ինչ է դարձել այդ անցյալը ներկայումս... Հիշողությամբ վերծանվածը նպատակ է հետապնդում բացահայտել ներկայի վրա անցյալի գործած ազդեցությունները, դրանց միանգամայն տեսանելի հետքերը: Իրական է դառնում անցյալի միջոցով ներկան հասկանալու և արժևորելու հնարավորությունը»:

Իր ողջ գործունեությամբ, բարոյական բարձր նկարագրով Միքայել Մինասյանը մնաց այն մարդը, ով կարևորում էր ամենակարևորը՝ ազնվությունը մարդկային հարաբերություններում:

Բժշկական համալսարանում դասախոսելու տարիներին, երբ վարում էր հասարակական գիտությունների ամբիոնի վարիչի պաշտոնը, իր փորձով, աշխարհընկալման տեսանկյունով երիտասարդ սերնդին կարողացավ փոխանցել հիմնաքարային բուրբ այն դրույթները, որոնք ինքը

կարևորում էր: Ուղեմիջ ունենալով՝ «ապագան չի կարող չբովանդակել անցյալը» դրույթը՝ նա նշում էր, որ ներկան կրում է անցյալի «բեռը»՝ հստակորեն կողմնորոշված լինելով դեպի ապագան:

Ձարգացնելով իր այս տեսակետը՝ նա սերմանում էր իր ունկնդիրների մեջ այն հանգամանքը, որ դա երբեք էլ չի նշանակում ծնշվել անցյալի տակ, քանզի դա կարող է հանգեցնել ազատորեն գործելու հնարավորությունից զրկման:

Երբ մարդը ապրում է լիաբուռն ու լեցուն կյանքով, երբ շատ են լինում նվաճումները, ձեռքբերումները, երբ այդուհանդերձ մնում է մտահոգությունը՝ արածը իմաստավորելու, դեմքերն ու դեպքերը մոռացումից փրկելու, այդ դեպքում անհատը, հասարակական ակտիվ դիրքորոշում ունեցող գործիչը կյանքի մայրամուտին դիմում է հուշագրությամբ: Մ. Մինասյանի դեպքում հիշողությունները նպատակ ունենին մոռացումից փրկել այն ժամանակահատվածի մարդկանց գործունեությունը, ում հետ նա աշխատել է, ստեղծել, արարել, զարգացրել:

«Ես իմ քաղաքական, գիտամանկավարժական գործունեության ամբողջ ընթացքում անհրաժեշտության դեպքում սեփական կարիերան զոհաբերել եմ հանուն զավակներիս ապագայի, ինձ համար ոչինչ չակնկալելով նրանց միջոցով: Բազմաթիվ պարագաներում շղթայված եմ եղել հատկապես որդիներիս ճակատագրի հանգամանքներով, նրանց նկատմամբ ունեցած պատասխանատվությամբ: Շատ դեպքերում շատ դերեր կատարել եմ հանուն նրանց հոգևոր վեհության հարստացման: Որդեգրել եմ անունս, հեղինակությունս զավակներիս ծառայեցնելու սկզբունքը: Հանուն նրանց իմ հեղինակությունը չպետք է ավելի բարձր հնչեր, քան՝ նրանցը, իսկ նրանք ամեն մեկը մյուսին տվել է այն, ինչ ունեցել է, երբ այդ մյուսը ունեցել է դրա կարիքը: Ամենացորդ»:

Այս գոհողության արդյունքը ավելի քան ակնառու է. նրա երեք զավակները ոչ միայն ճանաչված մասնագետներ են, ամբիոնների վարիչներ, հասարակական ազնիվ դիրքորոշմամբ անհատներ, այլև մարդիկ, ովքեր իրենց գործունեությամբ բարձր են պահում այն մարդու վարքն ու հեղինակությունը, ով հանուն իրենց է ապրել իր ողջ կյանքը:

**Ս. ԹՈՐՈՍՅԱՆ**

# ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐ

115



Տաղանդավոր նկարիչ-քանդակագործ Երվանդ Քոչարը մեր կերպարվեստի ամենափայլուն վարպետներից է:

Ծնվելով Թբիլիսիում՝ նա իր երիտասարդական տարիների մեծ մասն անց է կացրել արտասահմանում՝ Ֆրանսիայում, Թուրքիայում, Իտալիայում՝ Վենետիկում...

1936-ին հայրենիք վերադարձած արվեստագետին սպասում էին բանտը, արգելքները, մեկուսացումը: Սակայն հենց այդ շրջանում նա ստեղծեց իր լավագույն գործերի մեծ մասը:

Հավանաբար շատերի համար նորություն ասած կլինեն, եթե հայտնեն, որ նոմաներկերի գյուտի համար նա արժանացել է ԽՍՀՄ հեղինակային վկայագրի:

Ե. Քոչարը արժանացել է ժամանակի բարձրագույն պարգևներից՝ «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշանի և ԽՍՀՄ ժողովրդական նկարիչի կոչման:

Այսօր նրա քանդակների մեծ մասը զարդարում են Երևանի հրապարակներն ու փողոցները:

Սակայն նրա ամենագլխավոր գործի մասին: 1960-ական թվականներին Երևանի պետական համալսարանը հյուրընկալել էր անվանի արվեստագետին, ում, ի դեպ, ժամանակին Մաեստրո էին կոչում: Որքան ներում է հիշողությունս՝ այդ տարիներին միայն նրան էին մեծարում այդ տիտղոսով:

Ո՛չ, ո՛չ, և հազար անգամ՝ ո՛չ, Երվանդ Քոչարին չի կարելի սովորական նկարիչ համարել, հանրածանոթ բնութագրումներն ու մակդիրներն այս դեպքում անհիմաստ են:

Ինչպես բնորոշել նրան՝ հզո՞ր, թե՞ հանճարեղ. այս երկու գնահատականների միջև թերևս կարելի է տատանվել՝ չնայած ես հակված եմ երկրորդին...

ԱՆԴԻԵ ՊԱՍԿԱԼ ԼԵՎԻՍ  
արվեստի պատմաբան (Ֆրանսիա)



Համալսարանական ուսանողներիս համար նրա ներկայությունը առիթ դարձավ հարցերով պարզաբանելու հեղինակի որոշ մոտեցումները՝ Սասունցի Դավթի արձանը ստեղծելիս: Ինչպես ներկայացրեց Քոչարը՝ «Սասունցի Դավթի» արձանի ստեղծման գաղափարը առաջացել է 1939-ին, երբ նշվում էր մեր ազգային էպոսի հազարամյակը: Սինչև տոնակատարությունների մեկնարկը քիչ ժամանակ էր մնում: Հրեբլանական հանձնաժողովը որոշում է, որ ազգային հերոսի արձանը պետք է տեղադրվի Երևանի երկաթուղային կայարանի առջև, որպեսզի Սասունցի Դավթի «դիմավորի» մայրաքաղաք ժամանող հյուրերին, և դիմում է հայտնի քանդակագործներին, սակայն բոլորը հրաժարվում են, քանի որ ժամկետը շատ սեղմ էր: Այդ ժամանակ հանձնաժողովը որոշում է դի-

մել Քոչարին, ով նախկինում աշխատել էր էպոսի նկարագործումների վրա, հանգամանք, որը հնարավորություն տվեց Քոչարին համաձայնել՝ հաշվի չառնելով ժամանակի սղությունը: Ընդամենը 18 օրում արձանը, որը պատրաստվում էր հենց կայարանամերձ հրապարակում, պատրաստ էր:

1941-ին Քոչարին ձերբակալեցին՝ որպես «անվստահելի անձ»: Ընկերների հետ հանդիպման ժամանակ Քոչարն ասել էր, որ Հիտլերը մեծություն է, սակայն՝ բացասական իմաստով: Վերևներին հասցրել էին Քոչարի խոսքերի մի մասը միայն: Նրա ձերբակալումից հետո Դավթի արձանը ոչնչացրին:

1957-ին՝ խորհրդային կարգերի հիմնադրման 40-ամյակի կապակցությամբ, քաղաքային խորհուրդը որոշեց վերականգնել արձանը: Երբ

հարցը քննարկման դրվեց, շատ բացասական կարծիքներ հնչեցին: Ասում էին, որ Մոսկվան չի հանդուրժի արձանի տեղադրումը, քանի որ այն կարող է ազգայնական որակվել: Քոչարն իր աշակերտների հետ աշխատում էր Թոխմախի գերեզմանատան տարածքում, որտեղ գերեզմանաքարերի պատրաստման արհեստանոց կար. դժվարությունները շատ էին, արգելքները՝ նույնպես:

Արձանի բացումը կայացավ միայն երկու տարի անց: Այն հրապարակում տեղադրվեց 1959-ի դեկտեմբերի 3-ին: Բացմանը բացակայում էին հանրապետության ղեկավարության առաջին դեմքերը, սակայն մեծ թվով սասունցիներ էին եկել, սեղաններ գցել և մինչև ուշ գիշեր տոնում էին արձանի տեղադրումը:

Հանդիպման ընթացքում քանդակագործին տրված հարցերից հիշում են մի քանիսը՝ ճիշտ է արդյոք թուրը բռնելու Դավթի դիրքը, ի՞նչ է խորհրդանշում Քուռկիկ Ջալալու չափից ավելի փարթան պոչը, ինչու՞ է Դավիթը ձիու վրա ոչ թե նստած, այլ կանգնած, ի՞նչ թաս է ձիու սմբակի մոտ ընկածը...

Մատուրոն հանդարտ ոտքի կանգնեց և սկսեց հերթով պատասխանել մեր հարցերին:

«Դավիթը թուրը բռնել է գերանդու ձևով, նա ոչ թե մեկ-մեկ պետք է սպանի, այլ՝ հնձի: Եվ ո՞վ է նստած հնձում, նա պետք է կանգնած լիներ, որ կա-

րողանար իրականացնել իր հունձքը:

Քուռկիկ Ջալալին... նա Դավթի ձիու ձևը, նա Դավթի ընկերն էր, ով իր պոչի հարվածով պետք է օգներ Դավթին, սովորական պոչը ի՞նչ կարող էր անել...

Ձիու սմբակի մոտ ընկածը հայ ժողովրդի համբերության թասն է, որը լցվել է և արդեն թափվում է...»:

Ի դեպ՝ «Սասունցի Դավիթ» արձանի բնորոշ մեր պարարվեստի մեծ վարպետ Վանուշ Խանամիրյանն էր:

1923-ից հաստատվելով և ստեղծագործելով Փարիզում, օգտագործելով ֆրանսիական գեղարվեստի ողջ զինանոցը, որը համակված էր Պիկասոյի, Մատիսի, Բրակի, Լեժենի գաղափարներով, հավասարվելով նրանց՝ նա ընթացավ սեփական ուղիով՝ պահպանելով իր ազգային յուրահատկությունը:

Ավ. Իսահակյանը Քոչարին անվանել է «ազգային հպարտություն»:

Քոչարի ապրած ստեղծագործական կյանքը մի ուսանելի դաս է այն մասին, որ իսկական մեծությունները խառը ժամանակներում էլ չեն խո-



նարիվում, չեն շեղվում, գիտակցում են, թե ինչն է մշտնջենականը, հաստատունը և հոգու ամրությամբ պաշտպան են կանգնում արվեստի լավագույն արժեքներին:

Սիրելի ընթերցողներ, անպայման այցելեք Երվանդ Քոչարի թանգարան և ավելի մոտիկից կծանոթանաք նրա արվեստին:


Ս. ԹՈՐՈՍՅԱՆ

*Պաբլո Պիկասոյի և հայ նշանավոր արվեստագետ Երվանդ Քոչարի հանդիպումը, հիրավի, նշանավոր է և արժանի է հիշատակման: Պիկասոն, տեսնելով, որ Քոչարը ցանկանում է ձիու մագից վրձինը կտրել դանակով և չի կարողանում, զարմացած ասում է.*

*- Դու հայ ես, և պետք է լավ իմանաս, որ դանակը ձիու մազը չի կարողանում կտրել:*

*Եվ սկսում է պատմել, որ 7-րդ դարում, երբ արաբները արշավել էին Հայաստան՝ Սասուն, սասունցիները հազել են ձիու մագից զրահներ, որոնք չեն թողել, որ արաբի սրի հարվածը վնասի սասունցուն: Արաբները, տեսնելով սա, այս հնարքը իրենց հետ տարածում են այն երկրներում, որտեղ արշավում են, այդ թվում՝ Իսպանիայում: Իսկ իսպանացիները իրենց հերթին՝ Լատինական Ամերիկա և Հնդկաստան:*

*Երվանդ Քոչարը հետագայում, երբ կերտում էր Սասունցի Դավթի արձանը, Դավթի ազդրին քանդակել է ձիու մագից պատրաստված «զրահը»՝ ի պատիվ Պիկասոյի պատմածի:*



Բազմաժանր արվեստագետի ստեղծագործություններում մեծ թիվ են կազմում «Նկարչություն տարածության մեջ» շարքի գործերը:

# 2014-Ը «ՅԵՐԱՑԻ» ՅԻՎԱՆԴԱՆՈՑԻ ՄԵԿԴԱՐՅԱ ՅՈՒԵԼՅԱՆԻ ՏԱՐԻՆ Է

Այս հիվանդանոցը ժամանակին հանրապետական առաջին հիվանդանոց էր կոչվում, այն էլ` Լենինի անվան: Բակում Լենինի արձանն էր տեղադրված: Խորհրդային տարիներին սա նշանակում էր, որ այն եղած հիվանդանոցներից առաջինն էր, ամենագլխավորը: Գաղտնիք չէ, որ ողջ հանրապետության համար այն, իրոք, ամենագլխավորն էր: 2014-ը մեր հնօրյա հիվանդանոցի 100-ամյակի տարին է: Այսօր այն կոչվում է` Առաջին, Յամալսարանական, «Յերացի» հիվանդանոց: Երեք որակումներն էլ նշանակում են, որ հիվանդանոցը շարունակում է մնալ ամենաառաջինը, ամենագլխավորը, ամենահեղինակավորը: Աշխարհում համալսարանական հիվանդանոցները միշտ էլ ամենահեղինակավորն են, քանի որ նմանատիպ հիվանդանոցներում բուժմամբ զբաղվում են բարձր որակավորում ունեցող գիտնական-բժիշկները: Նույնը վերաբերում է նաև մեր համալսարանական հիվանդանոցային համալիրներին:

Աշնանը Երևանի պետական բժշկական համալսարանը հանդիսավորությամբ կնշի իր հիվանդանոցային համալիրի մեկդարյա հոբելյանը: Բոլոր նրանց, ովքեր ունեն հետաքրքիր փաստեր, լուսանկարներ, հիշողություններ այս հաստատության և նրա երախտավորների մասին, սիրով կապասենք մեր խմբագրատանը:



Առիթի բերմամբ «Իրական աշխարհ, իրական մարդիկ (ԻԱ-ԻՄ)» հասարակական կազմակերպության համակարգող Հովհաննես Մադոյանի հետ իմ գրույցի ընթացքում անդրադարձ եղավ այս կազմակերպության առաքելությանը՝ բարելավել ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց կյանքի որակը:

Գաղտնիք չէ, որ մեզանում ընդունված է ՄԻԱՎ-ով վարակված մարդկանցից սարսափել, ինչպես ժամանակին՝ բորոտներից: Նման մտավախությունը, եթե արդարացված է հասարակության լայն շերտերի կողմից, ապա պարզվում է, որ ՀՀ օրենսդրության համաձայն, յուրաքանչյուր մարդ, անկախ ՄԻԱՎ կարգավիճակից, ունի սահմանադրական իրավունքներ, որոնք պետք է բավարարվեն բժիշկների կողմից: Իրականությունը, սակայն, այն է, որ այդ իրավունքները ոչ միշտ են բավարարվում: ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց հանդեպ բժշկական խտրականություն դրսևորվում է այն ժամանակ, երբ այցելուներն ունենում են խնդիրներ՝ կապված իրենց ՄԻԱՎ դրական կարգավիճակի հետ (անկախ այն բանից, իրակա՞ն է այդ կարգավիճակը, թե՞ ենթադրյալ): Այս հողվածի նպատակն է քննարկել ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խտրականության դեպքերը, վերլուծել խտրականության պատճառները և տրամադրել առաջարկություններ, թե ինչպես կարելի է վերացնել այն:



### **ՄԻԱՎ ախտորոշմամբ այցելուներ խարանի ենթարկելու և իրավունք- ների ոտնահարման դեպքերի բացա- հայտում և կանխարգելում**

«Իրական աշխարհ, իրական մարդիկ» հասարակական կազմակերպությունը գործում է Երևանում, որի առաքելությունն է բարելավել ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց կյանքի որակը: ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և նրանց ընտանիքների իրավունքների պաշտպանությունը կազմում է «Իրական աշխարհ, իրական մարդիկ» ՀԿ-ի աշխատանքի կարևորագույն մասը:

պատմում է.

«Այս դեպքում, շահառուի խնդրանքով, ԻԱԻՄ-ը քայլեր չձեռնարկեց: Այցելուները, որոնց գաղտնիության իրավունքը հաճախ ոտնահարվում է, որոշում են քայլեր չձեռնարկել՝ վախենալով, որ այդպես ավելի շատ մարդիկ կիմանան իրենց կարգավիճակի մասին: Սակայն, շատ քիչ դեպքերում, որոշակի քայլեր են ձեռնարկվում, քանի որ գաղտնիության իրավունքը շատ ակնհայտ է ոտնահարվել և հետևանքներն էլ շատ լուրջ են եղել: Օրինակ, 2012-ին ԻԱԻՄ-ն իմացավ, որ շահառուն իր տեղամասային պոլիկլինիկայի բժշկին տեղեկացրել էր իր կարգավիճակի մասին՝ ակնկալելով, որ կպահպանվի գաղտնիությունը: Սակայն, բժիշկը գիտակցաբար, բայց սխալ կերպով խախտել էր գաղտնապահությունը, ինչի արդյունքում նրա ողջ ընտանիքը հանդիպեց համայնքի կողմից ուժեղ, բայց անհիմն արձագանքների: Չնայած, որ նրա ընտանիքի մյուս անդամները չուներին ՄԻԱՎ վարակ՝ նրա կնոջը, ով աշխատում էր գյուղատնտեսությունում, և դա էր ընտանիքի եկամուտը, ասել էին այլևս չգնալ աշխատանքի: Ընտանիքն իմացել էր նաև, որ իրենց երեք երեխաներին այլևս սիրով չեն վերաբերվում տեղական մանկապարտեզում և դպրոցում: Ընտանիքն այնքան շատ էր բախվել խտրականության, որ մտադրվել էր փոխել բնակության վայրը, սակայն, սկզբում սպասում էր, թե ԻԱԻՄ-ն ինչով կարող է օգնել»:

ԻԱԻՄ-ի սոցիալական աշխատող-

ները գնացել են ընտանիքի պոլիկլինիկա՝ շահառուի իրավունքները պաշտպանելու համար: Բժիշկն անակնկալի էր եկել՝ տեսնելով սոցիալական աշխատողներին, ովքեր ասել էին, որ եկել են քննարկելու մարդու իրավունքների խախտումները: Նրանք բժշկին հասցեագրել էին գաղտնիության չպահպանելն ու կեղծ տեղեկատվություն տարածելը: Բժիշկը խոստովանել էր, որ մտածել էր, թե ՄԻԱՎ-ի փոխանցումն այնքան հեշտ է, որ եթե ընտանիքի անդամներից մեկն ունի ՄԻԱՎ, ապա մյուսները նույնպես պետք է ունենան այն, նաև հավանաբար փոխանցել են համայնքի այլ անդամների: Միայն երբ բժիշկն իմացավ, որ ՄԻԱՎ-ը փոխանցվում է արյան, սերմնահեղուկի, հեշտոցային արտազատուկների, մայրական կաթի միջոցով, խոստացավ շտկել իրավիճակը: Հետագայում, երբ ԻԱԻՄ-ի աշխատակիցները հանդիպեցին ընտանիքի հետ, իմացան որ երեխաներն իսկապես վերադարձել են դպրոց, իսկ մայրը վերադարձել է իր աշխատանքին: Սակայն, ընտանիքը դեռևս հանդիպում է ընդհանուր խտրականության համայնքի կողմից: Եթե բժիշկը չխախտեր գաղտնիության իրավունքը, ընտանիքը չէր ունենա այսպիսի դժվարություններ:

### **Բժշկական ծառայությունների օգտվելու իրավունք**

Բժշկական ծառայությունների մասին ՀՀ օրենքը (1996) նշում է, որ բոլոր մարդիկ իրավունք ունեն ստանալ բժշկական օգնություն և սպասարկում: Սա նշանակում է, որ անկախ անձի ՄԻԱՎ կարգավիճակից, բուժաշխատողները պարտավոր են ապահովել բժշկական սպասարկում և բուժում: Բացի այդ՝ հայաստանյան կառավարությունն ընդունել է առանձին իրավական ակտեր, որոնք կանոնակարգում են առողջապահությունը սոցիալապես խոցելի խմբերի, այդ

թվում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց համար (ՄԻԱՎ-ից առաջացած հիվանդության կանխարգելման մասին ՀՀ օրենք, 1997):

Այնուամենայնիվ՝ այցելուների իրավունքները հաճախ ուղեւորներին են խտրականության միջոցով՝ հիմնված նրանց առողջական կարգավիճակի վրա: Որոշ դեպքերում բժիշկները հրաժարվում են բուժում իրականացնել այնպիսի պատճառներով, որոնք ակնհայտ կապ չունեն այցելուի ՄԻԱՎ կարգավիճակի հետ: Սակայն, հիմնական դեպքերում պարզ է դառնում, որ նրանց կարգավիճակը մերժման փաստացի պատճառն է: ԻԱԻՄ-ի սոցիալական աշխատողը նկարագրում է այսպիսի մի դեպք, որը տեղի է ունեցել 2012-ին.

Մյուս դեպքերում շահառուները ստիպված են իրենց գրպանից վճարել բուժաշխատողներին, որպեսզի ստանան համապատասխան բուժում: Այսպիսի մի դեպքի ժամանակ շահառուին և նրան ուղեկցող սոցիալական աշխատողին ասել են, որ ՄԻԱՎ-ով ապրող մարդու վիրահատությունը «վտանգավոր» է, և նման դեպքերում բժիշկն ավելի շատ գումար պետք է ստանա, քան սովորաբար տրվում է այդ վիրահատության համար: Սոցիալական աշխատողը բացատրել է, որ դա իրավունքների ուղեւորներին է և հրաժարվել է տրամադրել լրացուցիչ գումար: Սակայն, շատ այցելուներ, չունենալով նման իրավապաշտպան, ստիպված են լինում իրականացնել լրացուցիչ վճարումներ, ինչը նրանք դժվարությամբ են կարողանում իրենց թույլ տալ:

### **Ավելորդ տառապանքից և ցավից խուսափելու իրավունք**

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների Միջազգային Դաշնագրի 12-րդ հոդվածի համաձայն՝ պետք է քայլեր ձեռնարկվեն, որպեսզի ապահովվեն արագ և համապատասխան ցավազրկողներ: Սակայն իրականում Հայաստանի պալիատիվ խնամքի համակարգում շատ խնդիրներ կան, որոնք ազդում են այցելուների վրա՝ անկախ այն բանից, նրանք ունեն ՄԻԱՎ վարակ, թե՞ ոչ (որոնցից շատերը ներառված չեն այս հոդվածում): Կարևոր է նշել, որ ԻԱԻՄ-ի իրավապաշտպանների և շահառուների մոտ եղել են բազմաթիվ դեպքեր, երբ անհրաժեշտ ձևով շահառուին չեն ապահովել ցավազրկողով: Վերջերս ԻԱԻՄ-ի շահառուները մեկը, ով ուներ քաղցկեղ, չէր ստացել

ցավազրկող՝ չնայած տառապանքներով մեկ շաբաթ սպասելուն: Ցավոք սրտի, քանի որ շահառուն ենթարկվել էր խտրականության մեկ այլ բժշկական հաստատությունում, հավանական է, որ ցավազրկողների բացակայությունը կապված էր նրա ՄԻԱՎ կարգավիճակի հետ: Երբ ԻԱԻՄ-ի սոցիալական աշխատողը շահառուի անունից հանդես գալով փորձել է հասկանալ իրավիճակը, միակ պատճառը նշվել է այն, որ նախքան ցավազրկողներ տրամադրելը բժշկի հետ հանդիպումը պարտադիր էր: Այն փաստը, որ այդ հանդիպումը չի իրականացել մեկ շաբաթ, վիրավորական է: ԻԱԻՄ-ի իրավապաշտպանը բժշկին բացատրեց, որ եթե բուժման պլանը արագ չկազմվի, ապա նրանք կգնան առողջապահության նախարարություն, որպեսզի բողոքեն շահառուի հանդեպ բժշկի վատ վերաբերմունքից:

### **Որակի չափանիշերի պահպանման իրավունք**

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների Միջազգային Դաշնագրի 12-րդ հոդվածի համաձայն, որին միացած է նաև Հայաստանը՝ բոլոր մարդիկ իրավունք ունեն օգտվել հոգեկան և ֆիզիկական առողջության ամենաբարձր չափանիշերից, ներառյալ «կանխարգելում, բուժում և հսկողություն ... հիվանդությունների»»: Որակի չափանիշերը տարբերվում են երկրից երկիր, կարժամանակ, երբ Հայաստանում այդ չափանիշերը չէին պահպանվում ՄԻԱՎ դրական կարգավիճակով մարդկանց համար: Օրինակ, բժիշկը կարող էր հրաժարվել պատշաճ բուժումից՝ հանգեցնելով այնքան լուրջ հետևանքների, ինչպիսին է պացիենտի մահը: Անհրաժեշտ բուժումը մերժելու որոշումը ցույց է տալիս խեղաթյուրված համոզմունք, որ ՄԻԱՎ-ով ապրող մարդն արդեն իսկ դատապարտված է վաղաժամ մահվան: Հիմնվելով այս համոզմունքի վրա՝ բժիշկը կարող է ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց բուժումը դիտարկել որպես ժամանակի և ռեսուրսների անիմաստ վատնում, ինչպես այլ հավանական մահացու առողջական խնդիր ունեցողներին, օրինակ, քաղցկեղով հիվանդներին: Իրականում, մեկ այլ տեսանկյունից, բուժումը մերժելու բժշկի որոշումը կարող է հանգեցնել ՄԻԱՎ-ով ապրող մարդու վաղաժամ մահվան: Այսպես, եթե բժշկական տեսանկյունից բուժումը հակացուցված

չէ, ապա խախտվում է ՄԻԱՎ-ով ապրող մարդու՝ որակյալ առողջապահական ծառայություն ստանալու իրավունքը, ում մերժում են կամ ճիշտ չեն բուժում:

### **Ինչու՞ են առողջապահության ոլորտի մասնագետները/բուժաշխատողները խախտում ՄԻԱՎ-ով ապրող այցելուների իրավունքները**

**Տեղեկացվածության պակաս**  
Շատ փաստեր կան ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի վերաբերյալ, որ Հայաստանում բուժաշխատողները լիովին չեն ըմբռնում կամ ունեն թյուր կարծիք: Դեռևս անցյալում ՄԻԱՎ-ը դիտվում էր որպես մահվան դատավճիռ: Սրա պատճառով էլ, բնականաբար, մեծ վախեր կային այս հիվանդության հետ կապված: Բայց այսօր ՄԻԱՎ-ով վարակված լինելու փաստը չպետք է դիտվի որպես մահվան դատավճիռ: Հակառակը՝ հակառետրովիրուսային դեղամիջոցների շնորհիվ ՄԻԱՎ վարակն այժմ համարվում է կառավարելի, քրոնիկ հիվանդություն: Արդյունքում՝ ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ կարող են ապրել երկար տարիներ առողջ կյանքով և նույնիսկ կարող են կազմել ընտանիքներ և ունենալ լիովին առողջ երեխաներ (առողջապահության համաշխարհային կազմակերպություն): Հետևաբար՝ Հայաստանում ՄԻԱՎ-ով ապրող այցելուների նկատմամբ բուժաշխատողների ունեցած վախերը չեն համապատասխանում իրականությանը:

Ինչպես 2005-ին նշել է UNESCO-ն՝ «Հայաստանում բուժաշխատողների շրջանում ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի վերաբերյալ գիտելիքների մակարդակը, ընդհանուր առմամբ, շատ ցածր է»: Բուժաշխատողներն ապատեղեկացված են կամ թյուր կարծիք ունեն ՄԻԱՎ-ի տարածման ուղիների մասին: Օրինակ, շատ բուժաշխատողներ թյուրիմացաբար կարծում են, որ ՄԻԱՎ-ը կարող է փոխանցվել հալման, հազալու և փռշտալու միջոցով, ինչպես նաև՝ համբուրվելիս: Բնականաբար՝ նման համոզմունքները զգալիորեն մեծացնում են ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց վախը և ավելորդ խնդիրներ են ստեղծում բոլորի համար: «Իրական աշխարհ, իրական մարդիկ» ՀԿ-ի սոցիալական աշխատողը ներկայացնում է վերջին դեպքերից.

«Սոցիալական աշխատողներն իրենց հետ տարել էին փաստաթղթեր, որոնք հաստատում էին, որ երեխան վարակված չէր ՄԻԱՎ-ով և, հետևաբար, վտանգ չէր կարող ներ-

կայացնել բժիշկների համար: Նաև տեղեկատվություն էր տրամադրվել բժշկին և նրա բուժանձնակազմին ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի վերաբերյալ: Բացատրվել է, թե ի՞նչ է իրենից իրականում ներկայացնում ՄԻԱՎ-ը, ինչպե՞ս է փոխանցվում այն, ծանոթացրել են ուղրտում գործող օրենքների հետ և խոսել տվյալ բժշկական կենտրոնում թույլ տրված սխալների և իրավունքի ոտնահարման մասին: «Իրական աշխարհի, իրական մարդիկ» ՅԿ-ի միջամտությունն այս դեպքում դրական արդյունք է տվել. բժշկական կենտրոնի բուժանձնակազմը կարիք ուներ այս ուղրտում վարժանքների մասնակցության: «Իրական աշխարհի, իրական մարդիկ» ՅԿ-ն խորհուրդ է տվել այդ հարցով դիմել ՀՀ ԱՆ ՁԻԱՅ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն: Միջամտության արդյունքում բժշկի և բուժանձնակազմի մոտ առկա վախը զգալիորեն նվազել է, և հետագայում այլևս դժվարություններ չեն առաջանա նրանց և այցելուների միջև»:

**Անհիմն մեղադրանք**

Բուժաշխատողների կողմից ՄԻԱՎ-ով հիվանդների իրավունքների խախտման պատճառներից մեկն էլ այն կարծրատիպն է, որ ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ «բարոյապես վատն են» (միայն բարոյապես վատ մարդիկ կարող են վարակվել ՄԻԱՎ-ով): Քանի որ երկար ժամանակ հիվանդությունն ասոցացվում էր թմրանյութեր գործածելու և նույնասեռականության հետ, շատերը թյուրիմացաբար մտածում էին, որ ՄԻԱՎ-ով ապրող մարդն ինքն է մեղավոր, որ վարակվել է և, հետևաբար, արժանի չէ օգնության: Այնուամենայնիվ՝ նման դիրքորոշումն անտրամաբանական է և ապատեղեկացված լինելու արդյունք է: ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ կարող են վարակվել անգիտակցաբար, «անմեղորեն», օրինակ, ամուսնու կամ կնոջ հետ սեռական հարաբերության ժամանակ: Դա փաստ է, որ Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ վարակի փոխանցման հիմնական ուղին հետերոսեքսուալ ճանապարհն է՝ 50 տոկոսից ավել, որը համարվում է «նորմալ» հայաստանյան պայմաններում ( ՀՀ ԱՆ ՁԻԱՅ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն): Նույնիսկ այն դեպքերում, երբ մարդը վարակվել է բուժաշխատողների տեսանկյունից «բարոյապես սխալ» համարվող ճանապարհով, չկա ոչ մի հիմնավորում անհրաժեշտ բուժում

չտրամադրելու համար: Ելնելով իրենց մասնագիտական էթիկայի կանոններից և օրենքներից՝ բուժաշխատողները պարտավոր են բուժել բոլորին՝ անկախ նրանից, թե, արդյո՞ք, այցելուն համապատասխանում է իրենց պահանջներին, թե՞ ոչ (անկախ այցելուի այս կամ այն խմբին պատկանելիությունից կամ իրավիճակից): Օրինակ, բժիշկները պարբերաբար օգնում են թոքերի քաղցկեղով ծխողներին կամ ճանապարհատրանսպորտային պատահարների պատճառով համարվող ալկոհոլ չարաշահած վարորդներին: ՄԻԱՎ-ի դեպքում մարդկանց մեղադրելը՝ իրենց կարգավիճակի հետ կապված, հատկապես կարող է ճակատագրական լինել, քանի որ այն փաստացիորեն կարող է նպաստել ՄԻԱՎ-ի տարածմանը. ոչ միայն ՄԻԱՎ-ի նկատմամբ հետազոտվելու վախը, որը կարող է նպաստել վարակի անգիտակցաբար փոխանցմանը, այլ նաև խտրականության ենթարկվելու վախը և որ, միգրացի, հիվանդության մասին իմանալուց հետո իրենց բուժում չեն տրամադրի, ստիպում է ՄԻԱՎ-ով ապրող այցելուներին թաքցնել իրենց կարգավիճակը (Chesney & Smith, 1999):

ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց տեղեկատվություն տրամադրելը իրենց իրավունքների վերաբերյալ կօգնի մեծացնել պատասխանատվությունը բուժաշխատողների շրջանում:

Կրթման այս ձևերը կարևոր են գործընթացում ներգրավված բոլոր անհատների համար՝ ներառելով և բուժաշխատողներին, և այցելուներին, և, իհարկե, մեծապես նպաստում են Հայաստանում ՄԻԱՎ-ի տարածման տեմպերի դանդաղեցմանը:

**Բուժաշխատողների դերը**

Մենք հավատում ենք, որ հայաստանյան բուժաշխատողները կարող են դրական փոփոխություն առաջացնել՝ ՄԻԱՎ-ով ապրող այցելուներին վերաբերվելով այնպես, ինչպես կվերաբերվեին ցանկացած այլ հիվանդություն ունեցող այցելուներին. խոսքը գնում է ոչ միայն պարզապես բժշկական սարքավորումներով միջամտության կամ ռեսուրսներով բուժման, այլ նաև՝ հարգալից և կարեկցող վերաբերմունքի մասին:

ՄԱՎ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի միացյալ ծրագրի առաջարկությունների հետ համատեղ՝ մենք նաև կարծում ենք, որ բուժաշխատողները պետք է համապատասխանաբար տեղեկացված

լինեն ՄԻԱՎ-ով այցելուների հետ աշխատելիս իրենց իրավունքների մասին (UNAIDS, 2012):

Մինչդեռ, թեք բուժաշխատողները կարող են ընտրողաբար զբաղվել հարցերի շուրջ իրենց տեղեկացվածության բարձրացմամբ, մենք կարծում ենք, որ լայնամասշտաբ դրական փոփոխություն ստեղծելու համար ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի վերաբերյալ կրթությունը պետք է պաշտոնականացվի: Ներկայումս Հայաստանում բժշկական ծրագրերն ընդգրկում են ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի մասին թեմաները, և վերջին տարիներին բժիշկների համար նախատեսված ներուժի զարգացման նախաձեռնություններ են ստեղծվել՝ ինչպիսիք են ՁԻԱՅ-ի կանխարգելման համապետական կենտրոնի կողմից մշակվածները: Նման ծրագրերն ընդլայնելուց և դրանց շարունակականությունն ապահովելուց բացի՝ մենք առաջարկում ենք նաև իրականացնել այդ ծրագրերի արդյունավետությունը գնահատող հետազոտություն՝ գիտելիքների մեջ եղած հատուկ բացերը լրացնելու համար: Նաև առաջարկում ենք կրթական վարժանքներ անցկացնել առողջապահական ոլորտի վարչական աշխատակիցների, այդ թվում նաև՝ բժշկական համալսարանների պրոֆեսորների, առողջապահության կազմակերպիչների համար, ովքեր մշակում են ռազմավարություններ, որոնք կարող են լուրջ ազդեցություն ունենալ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց կյանքի վրա:

«Իրական աշխարհի, իրական մարդիկ» ՅԿ-ն լրջորեն կոչ է անում իրականացնել այս հողվածում առաջարկված միջոցառումները: Մենք հավատում ենք, որ կարող ենք երկար ճանապարհ անցնել՝ թեթևացնելու կյանքն իրական աշխարհում ապրող իրական մարդկանց համար՝ ոչ միայն ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց, այլ նաև բուժաշխատողների և, ընդհանրապես, բնակչության համար: ՄԻԱՎ-ի հետազոտման, բուժման և ջատագոյության մեջ ընդգրկվածներն ունեն մեկ վերջնական նպատակ՝ հիվանդության վերացում, մինչդեռ «Իրական աշխարհի, իրական մարդիկ» ՅԿ-ի երազանքն է ունենալ հասարակություն, որտեղ ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ այլևս աղվովկացիոն ծառայությունների և օգնության կարիք չեն ունենա:

# ՀՈՒՆԻՍԻ 15-Ը ՀՀ ՊԵՏԱԿԱՆ

**Բ**ոլոր ժամանակներում մարդիկ օգտագործել են խորհրդանիշեր և ազդանշաններ՝ միմյանց հետ հաղորդակցվելու, որևէ բանի մասին գուշացնելու կամ որևէ բան առանձնացնելու և ընդգծելու համար: Խորհրդանիշը էության, մտածողության, գաղափարի, կեցության կառույցների ոգեղեն կամ նյութական արժեքի արտահայտությունն է: Ազգն իր գոյության ընթացքում ստեղծում է խորհրդանիշերի մի համակարգ, որը բնորոշ է դառնում իր լեզվամտածողությանը, մշակույթին, պատմությանը: Պետական խորհրդանիշերը երկակի բնույթ ունեն՝ ազգային և միջազգային: Դրանք, տվյալ պետության առանձնահատկությունը նշելուց զատ, պետք է համապատասխանեն նաև միջպետական հարաբերությունների զուտ առարկայական պահանջներին: Պետական խորհրդանիշերը մեր ազգային պատվի խորհրդանիշն

են, մեր զրկանքների, մեր հերոսության, մեր խիզախումի ու մեր հաղթանակի հավաստագիրը: Դրոշը մենք ենք, դրոշը մեր դեմքն է, մեր անունը, մեր արժանապատվությունը, մեր խիղճը: Դրոշը մեր հավաքականությունն է՝ մեզ բոլորիս իրար կապող, մեզ նույնացնող: Դրոշը աշխարհին պարզած մեր ինքնությունն է, մեր անկախ գոյության վավերագիրը, ուժեղ ու ինքնիշխան լինելու մեր կամքն ու վճռականությունը: Պետության բնութագրման և ճանաչման խորհրդանիշ-տարրերն են դրոշը, զինանշանը, օրհներգը: Պետական խորհրդանիշերի շարքին կարելի է դասել նաև տվյալ պետության դրամը: Հայաստանի Հանրապետության պետական տոնացույցում իր պատվավոր տեղն ունի պետական խորհրդանիշերի օրը, այսինքն՝ մեր դրոշի, զինանշանի, օրհներգի տոնը:



## ԴՐՈՇԸ

Հայկական դրոշը Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշն է: Դրոշը երեք հավասար հորիզոնական զուլերով ուղղանկյուն պաստառ է, վերևում՝ կարմիր, մեջտեղում՝ կապույտ, ներքևում՝ նարնջագույն: Այս գույները դարեր շարունակ նույնացվել են հայ ազգի հետ: Հայաստանի դրոշն ընդունվել է 1990-ի օգոստոսի 24-ին՝ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից: Իսկ 2006-ի հունիսի 15-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն ընդունել է նոր՝ «Հայաստանի Հանրապետության պետական դրոշի մասին» օրենքը: Գոյություն ունեն այս գույների մի շարք մեկնաբանություններ, որոնցից առավել ընդունելի է

հետևյալը. կարմիր գույնը խորհրդանշում է հայրենիքի պաշտպանության համար հայերի հեղած արյունը, կապույտը երկրի բնությունն է, նարնջագույնը՝ ազգային խիզախությունն ու աշխատասիրությունը: Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը՝ ապա այստեղ հաստատված է գույների հետևյալ նշանակությունը. կարմիրը խորհրդանշում է Հայկական լեռնաշխարհը, հայ ժողովրդի հարատև պայքարը գոյության, քրիստոնեական հավատքի, Հայաստանի ազատության և անկախության համար, կապույտը՝ խաղաղ երկնքի տակ ապրելու հայ ժողովրդի ձգտումը, նարնջագույնը՝ հայ ժողովրդի ստեղծագործ տաղանդն ու աշխատասիրությունը:

# ԽՈՐՀՐԴԱՆԻՇԵՐԻ ՕՐՆ Է

## ԶԻՆԱՆՇԱՆԸ

«Չայաստանի Չանրապետության պետական զինանշանի մասին» օրենքն ընդունվել է Գերագույն խորհրդի կողմից 1992-ի ապրիլի 19-ին: Վերականգնվել է Չայաստանի Առաջին Չանրապետության (1918-1920թթ.) զինանշանը, որի հեղինակներն են ճարտարապետ, Ռուսաստանի գեղարվեստի ակադեմիայի ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանը և նկարիչ Չակոբ Կոջոյանը: Չայաստանի Չանրապետության զինանշանի կենտրոնական մասում՝ վահանի վրա, պատկերված են հայկական չորս թագավորական տոհմերի՝ Արտաշեսյանների, Արշակունիների, Բագրատունիների և Ռուբինյանների (Կիլիկիայի թագավորություն) զինանշանները: Դրանք բոլորում են բիրլիական Արարատ լեռան պատկերը, որի գագաթին ուրվագծվում է Նոյան տապանը: Վահանի երկու կողմից պատկերված են առյուծ և արծիվ, որոնք խորհրդանշում են ոգու, իշխանության, աննկունության և արիության ուժը: Ներքևում պատկերված սուրը խորհրդանշում է հայ ժողովրդի պայքարը հանուն ազատության և անկախության, փետուրն ու հասկերը՝ հայ ժողովրդի ստեղծարար տաղանդը և խաղաղասիրությունը:



## ՕՐՆԵՐԳԸ

Չայաստանի Չանրապետության Գերագույն խորհրդի 1991-ի հունիսի 1-ի որոշմամբ, որպես երկրի օրհներգ ընդունվել է Չայաստանի Առաջին Չանրապետության (1918-1920թթ.) օրհներգը:

Տեքստը գրել է Միքայել Նալբանդյանը, երաժշտությունը՝ Բարսեղ Կանաչյանը:

Պետական օրհներգը հանդիսավոր երաժշտական ստեղծագործություն է՝ գրված ծրագրային բնույթի բանաստեղծության խոսքերով:

Պետական օրհներգը պարտադիր հնչում է պաշտոնական հանդիսությունների ժամանակ պետական դրոշմը բարձրացնելիս, նորընտիր նախագահի երդման արարողության, Ազգային ժողովի նստաշրջանների, հանրապետությունում անցկացվող զորահանդեսների, միջազգային և համապետական մարզական մրցումների պաշտոնական բացման ու փակման, միջազգային մրցաշարերում մրցանակային տեղեր գրաված մարզիկներին պարգևների հանձնման հանդիսավոր արարողությունների ժամանակ, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում:

Երբ հնչում է պետական օրհներգը, ներկաները ոտքի են կանգնում և դեմքով շրջվում դեպի պետական դրոշմ, տղամարդիկ հանում են գլխարկները:

*Մեր Չայրենիք, ազատ, անկախ,  
Որ ապրել է դարեդար,  
Իր որդիքը արդ կանչում է  
Ազատ, անկախ Չայաստան:*

*Ահա եղբայր, քեզ մի դրոշ,  
Զոր իմ ձեռքով գործեցի,  
Գիշերները ես քուն չեղա,  
Արտասուքով լվացի:*

*Նայիր նրան՝ երեք գույնով  
Նվիրական մեկ նշան,  
Թող փողփողի թշնամու դեմ,  
Թող միշտ պանծա Չայաստան:*

*Ամենայն տեղ մահը մի է,  
Մարդ մի անգամ պիտ մեռնի,  
Բայց երանի, որ յուր ազգի  
Ազատության կզոհվի:*

# ՀՈՒՆԻՍԻ 1-Ը ԵՐԵՒԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՆ Է



## ՆՐԱՆՑ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՈՒՄԸ ՄԵՐ ԱՌԱՋՆԱՅԵՐԹ ԽՆԴԻՐՆ Է

### ՀՈՒՆԻՍԻ 12-Ը ԵՐԵՒԱՆԵՐԻ՝ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԴԵՍ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐՆ Է

Երեխաների՝ աշխատելուն դեմ պայքարի համաշխարհային օրը սահմանվել է Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից և ամեն տարի նշվում է հունիսի 12-ին: Օրացույցում նոր օր մտցնելու գաղափարն առաջացավ 1997-ին Ամստերդամում և Օսլոյում անցկացված երեխաների աշխատանքի ամենավատ ձևերի դեմ պայքարի և երեխաների աշխատանքի վերաբերյալ միջազգային համաժողովից հետո:

Այս միջոցառումները հասարակության ուշադրությունը գրավեցին դեպի երեխաների աշխատանքի վերացման համար գլոբալ ջանքերի կիրառման անհրաժեշտության վրա: Բացի այդ՝ նշվել է նաև վիճակագրական հետազոտությունների պահանջվածության մասին՝ այս գործունեությանը տեղեկատվությամբ ապահովելու համար:

Երեխաների աշխատանքի վատագույն ձևերն արմատախիլ անելու մասին Աշխատանքի միջազգային կազմակերպության N82 կոնվենցիայի ներդրման պահից հետո շատ աշխա-

տող երեխաներին աջակցություն է ցուցաբերվել, բայց դեռ շատ անելիքներ կան:

Վերջին տվյալների համաձայն՝ աշխարհում աշխատող երեխաների քանակը 215 միլիոն է կազմում, ընդ որում, նրանցից 115 միլիոնն աշխատում են վտանգավոր պայմաններում: Նրանցից շատերը դպրոց հաճախելու, առավել և՛ խաղալու ժամանակ գրեթե չեն ունենում... Նրանք հաճախ պատշաճ սնունդ ու խնամք չեն ստանում:

Աշխատանքի միջազգային կազմակերպության անդամ երկրներն իրենց առջև նպատակ են դրել մինչև 2016-ին վերացնել երեխաների աշխատանքի վատագույն ձևերը: Դրան հասնելու համար ինչպես գործունեության ծավալների մեծացում, այնպես էլ քաղաքական կամքի ամրապնդում կպահանջվի:

Անհրաժեշտ է նաև նշել, որ երեխաների աշխատելու դեմ պայքարի համաշխարհային օրն ամեն տարի որոշակի թեմայի է նվիրված:


Այսպես՝ տարբեր տարիներ այս օրը

տարբեր կարգախոսներով է անցել. «Ուշադրություն, երեխաները վտանգավոր աշխատանքներում են: Արմատախիլ անենք երեխաների աշխատելը», «Մարդու իրավունքների և սոցիալական արդարության համար: Արմատախիլ անենք երեխաների աշխատելը», «Ոչ տնային աշխատող երեխաներին», «Ընդլայնել սոցիալական պաշտպանությունը, պայքարել երեխաների աշխատելու դեմ» և այլն:

Երեխաների աշխատելու վերաբերյալ հասարակության տեղեկացվածությունը բարձրացնելու նպատակով այս օրը շատ երկրներում հասարակական և քաղաքական կազմակերպությունների և հաստատությունների կողմից ամեն տեսակի միջոցառումներ են կազմակերպվում. նկարների ցուցադրություններ, կայքերի շնորհանդեսներ (ներկայացումներ), զանգվածային ակցիաներ, սպորտային մրցումներ, մանկական ներկայացումներ, տեղեկատվական արշավներ:

**ԼՈՒՄԱՆ ԿԱՐԱՅԻՆ  
ՌԵՊՈՐՏԱԺ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ  
ԿԱՆԱԶ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ՝  
ՈՒՄԱՆՈՂՆԵՐԻ  
ԱՄԵՆԱՍԻՐԱԾ  
ՀԱՏՎԱԾԻՑ**

**Լ**ուսանկարները տպագրվում են այն մտադրությամբ, որ տարիներ հետո, երբ բավականին փարթամացած կլինեն այսօր դեռևս փոքրիկ ծառերի սաղարթները, և ավելի ընդգրկուն տարածք կգրադեցնեն նրանց ստվերները, որտեղ ավելի շատ ուսանողներ կտեղավորվեն՝ վայելելու այն հաճույքը, որ այսօր վերապահված է եզակիներին՝ ստվերային տարածքի չափազանց փոքր լինելու պատճառով, հիշեցնեն, թե ինչպիսին են եղել դրանք, երբ նորատունկ ծառեր էին: Օրացույցում այսօր 2014 թվականն է...



**Հունիսի 15-ը  
բուժաշխատողի օրն է:  
Այդ առիթով շնորհավորում ենք  
մեր բոլոր այն աշխատակիցներին,  
ովքեր ծառայում են մարդկանց  
առողջության պահպանման  
չափազանց պատասխանատու  
գործին:**

